«Յուքոմ» ՓԲԸ
ՀՀ, Երևան 0069,
Դավիթ Անհաղթի 8/4
www.ucom.am

Հարցերի դեպքում զանգահարեք
444՝ Ucom հեռախոսահամարից,
+374 (11) 444 444՝ այլ հեռախոսահամարներից
Էլ. փոստ՝ 444@ucom.am

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Առարկա

1.1. «ՅՈՒՔՈՄ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Յուքոմ) էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայություններ (1.2 կետում նշված անձանց) մատուցում է սույն ընդհանուր դրույթների և պայմանների համաձայն (այսուհետ՝ Պայմաններ):

1.2. Սույն Պայմաններով Յուքոմը՝

1.2.1. Շարժական կապի ծառայություններ է մատուցում անհատների և Կորպորատիվ բաժանորդների, եթե այլ բան նախատեսված չէ վերջիններիս հետ կնքված Բաժանորդային պայմանագր(-եր)ով:

1.2.2. Ամրակցված ցանցով ծառայություններ է մատուցում միայն անհատների, իսկ Կորպորատիվ բաժանորդների համար գործում են այլ պայմաններ, դրանով պայմանավորված՝ ձեռնարկատիրությամբ զբաղվող անձանց (անկախ որպես այդպիսին գրանցված լինելու փաստից) և կազմակերպությունների հետ (որոնք ցանկանում են բաժանորդագրվել Ամրակցված ցանցով մատուցվող ծառայություններին) կնքվում են առանձին պայմանագրեր՝ սույնից տարբերվող պայմաններով:

1.3. Սույն Պայմանները սահմանվում են Յուքոմի կողմից և հանդիսանում են էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման Բաժանորդային Պայմանագիր կնքելու հրապարակային օֆերտա (առաջարկ):

1.4. Պայմանների բոլոր կետերի պահպանմամբ Ձեր կողմից ներկայացված՝ Ծառայություններին բաժանորդագրման դիմումը, առկայության դեպքում դրա հավելվածները (այսուհետ՝ Դիմում), սույն Պայմանների, կնքված Համաձայնագրերի, առանձին Ծառայություններին վերաբերող հատուկ պայմանների (այսուհետ՝ Հատուկ Պայմաններ), Ծառայությունների հրապարակված Արժեքների (Գնացուցակի), Սակագնային Պլանի/Փաթեթի, Ծառայության առաջարկի նկարագրի (այսուհետ՝ Առաջարկի Նկարագիր), Անձնական տվյալների մշակման քաղաքականության, ինչպես նաև յուրաքանչյուր Ծառայությունից օգտվելու վերաբերյալ Յուքոմի կողմից սահմանված ընթացակարգերի և կանոնների (այսուհետ՝ Կարգեր/Կանոններ) հետ միասին հանդիսանում են Ձեր և Յուքոմի միջև կնքված պայմանագիր, այսուհետ՝ **Բաժանորդային Պայմանագիր**:

1.5. Նշված փաստաթղթերի միջև տարընթերցումների և հակասությունների առկայության դեպքում համապատասխան փաստաթղթերի դրույթները կիրառվում են հետևյալ գերակայությամբ՝ Դիմում, Հատուկ Պայմաններ, սույն Պայմաններ և Գնացուցակ, Սակագնային Պլան, Առաջարկի Նկարագիր, Կարգեր/Կանոններ:

1.6. Բաժանորդը կարող է սույն հրապարակային օֆերտան ընդունել (ակցեպտավորել) նաև էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով բաժանորդագրման կարգն ու առանձնահատկությունները հրապարակված են Յուքոմի Վեբ կայքում:

2. Սահմանումներ

2.1. **Հանրային էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայություններ, այսուհետ՝ Ծառայություն(-ներ)՝** Յուքոմի կողմից մատուցվող ծառայություններ, որոնք ներառվում, բայց չեն սահմանափակվում ստորև նշված ցանկով, և որոնց նկարագրությունը, առանձնահատկություններն ու արժեքը (գնացուցակը), հրապարակված են Յուքոմի Վեբ-կայքում և ներկայացված են Յուքոմի Վաճառքի և սպասարկման կենտրոններում.

- Լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություն,
- Հեռախոսակապի ծառայություն,

- Տեսազանգի ծառայություն (video call),
- Այ-Փի հեռուստատեսության ծառայություն (IPTV),
- Տվյալների փոխանցման ծառայություն (DATA),
- Հավելյալ արժեքով ծառայություն (VAS),
- Կարճ հաղորդագրությունների (SMS) և մուլտիմեդիա հաղորդագրությունների (MMS) ուղարկման ծառայություն,
- Տեսավարձույթի ծառայություն (VoD),
- Անվտանգ ինտերնետի, Wi-Fi տրամադրման/ակտիվացման ծառայություն,
- Լրացուցիչ սարքերի տրամադրման և մոնտաժման ծառայություն,
- Կոմունալ ծառայությունների դիմաց Այ-Փի հեռուստատեսության միջոցով վճարում կատարելու ծառայություն,
- Հեռահաղորդակցության այլ ծառայություններ:

2.2. **Յուքոմ՝** ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից տրամադրված լիցենզիաների և թույլտվությունների հիման վրա ՀՀ-ում հանրային էլեկտրոնային հաղորդակցության և հեռուստատեսության ծառայություններ մատուցող ընկերություն:

2.3. **Օրանժ՝** «Օրանժ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն, որի իրավահաջորդ 01.04.2016թ.-ից հանդիսանում է Յուքոմը:

2.4. **Յուքոմի Ցանց կամ Ցանց՝** հաղորդման համակարգ, իսկ համապատասխան դեպքերում նաև միացնող-անջատող կամ ուղղորդող սարքավորումներ և այլ ռեսուրսներ, որոնք թույլ են տալիս հաղորդել ազդակներ օպտիկամանրաթելային և/կամ այլ տեսակի մալուխով (այսուհետ՝ **Ամրակցված ցանց**), ռադիոյով, օպտիկական կամ այլ էլեկտրամագնիսական միջոցներով, այդ թվում՝ արբանյակային ցանցով (այսուհետ՝ **Շարժական կապի ցանց**) այնպես, որ դրանք օգտագործվեն ազդակների հաղորդման համար՝ անկախ հաղորդվող տեղեկատվության տեսակից:

2.5. **Ցանցի Հասանելիության Տարածք՝** այն հասցեն (տարածքը), որտեղ տեխնիկապես հասանելի են Յուքոմի Ամրակցված ցանցով մատուցվող Ծառայությունները:

2.6. **Ցանցի Ծածկույթ՝** աշխարհագրական վայր/տարածք, որտեղ (որի սահմաններում) առկա է Յուքոմի Շարժական կապի Ծառայություններից օգտվելու տեխնիկական հնարավորություն:

2.7. **(Յուքոմի) Վեբ-կայք՝** www.ucom.am:

2.8. **Անձնական էջ՝** Վեբ-կայքի միջոցով բաժանորդի անձնական էջը/տիրույթը, որի միջոցով Բաժանորդը կարողանում է կատարել բաժանորդագրման հետ կապված այնպիսի փոփոխություններ, որոնք սահմանված են Յուքոմի կողմից, ինչպես նաև ծանոթանալ Ծառայությունների մատուցման առնչվող փոփոխություններին:

2.9. **Վաճառքի և սպասարկման կենտրոն(-ներ)՝** Յուքոմի կողմից առաջարկվող Ծառայությունների և Սարքավորումների վաճառքի և Բաժանորդների սպասարկման համար մասնագիտացված կենտրոն(-ներ):

2.10. **Զանգերի սպասարկման կենտրոն՝** Յուքոմի մասնագիտացված կենտրոն, որտեղ զանգահարելով՝ Բաժանորդը կարող է տեղեկություն ստանալ իրեն մատուցվող Ծառայությունների, հաշվարկված վճարների, Յուքոմի կողմից մատուցվող հավելյալ ծառայությունների, ինչպես նաև Ծառայությունների ընդհատման (դադարեցման) պատճառների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում ստանալով տեխնիկական բաժնի մասնագետի աջակցությունը, կատարել Յուքոմի կողմից սահմանված և թույլատրելի փոփոխություններ Բաժանորդային պայմանագրում և այլն:

2.11. **Բաժանորդ կամ Դուք՝** ցանկացած անձ, ում հետ կնքվել է Բաժանորդային Պայմանագիր:

2.12. Կորպորատիվ Բաժանորդներ՝ առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ, անհատ ձեռնարկատերեր:

2.13. Տարածք՝ բնակարան/բնակելի տուն կամ այդպիսի նպատակի համար ծառայող տարածք, որտեղ Բաժանորդը ցանկանում է ստանալ Յուքոմի Ամրակցված ցանցով մատուցվող Ծառայություն(-ներ)ը:

2.14. Հաշիվ՝ Բիլինգային Համակարգում վերլուծական հաշվարկի ռեգիստր, որն օգտագործվում է Բաժանորդին մատուցվող Ծառայությունների ծավալների և դրանց դիմաց գանձվող վճարումների հաշվառման համար:

2.15. Բիլինգի Ժամանակաշրջան՝ Բիլինգի Օրվանից մինչև հաջորդ Բիլինգի Օրն ընկած ժամանակահատվածը:

2.16. Բիլինգային Համակարգ՝ ավտոմատացված համակարգ, որը հաշվառում է Բաժանորդին մատուցված Ծառայությունների տեսակը, ծավալը, արժեքը, հաշվարկում Բաժանորդների պարտքերը և ստացված վճարումները և ներկայացնում ամփոփ արդյունքներ (քաղվածք):

2.17. Բիլինգի Օր՝ յուրաքանչյուր ամսվա վերջին օրը կամ Բաժանորդային Պայմանագրով սահմանված այլ օր, երբ ամփոփվում է Բիլինգային ժամանակաշրջանում Բաժանորդին մատուցված Ծառայությունների դիմաց գեներացված և Բաժանորդի կողմից արդեն վճարված կամ վճարման ենթակա գումարը (այն լինում է ամսվա մեջ մեկ օր):

2.18. Դիմում՝ Յուքոմի կողմից սահմանված ձևի գրավոր փաստաթուղթ (սույն Պայմաններն ամբողջությամբ և անվերապահորեն ընդունելու և դրանց համաձայն մատուցվող Ծառայություններին բաժանորդագրվելու վերաբերյալ) ստորագրված (կնքված) Բաժանորդի (վերջինիս լիազորված անձի) կողմից:

2.19. Դիմումի համար (application number)՝ թվերի համակցություն, որն օգտագործվում է Բիլինգային Համակարգում Բաժանորդի նույնականացման համար:

2.20. Գաղտնաբառ՝ Ծառայության որոշակի տեսակներից օգտվելու, ինչպես նաև Անձնական էջ մուտք գործելու համար Բաժանորդի կողմից որոշվող տառերի, նշանների և/կամ թվերի համակցություն, որն օգտագործվում է Բաժանորդի նույնականացման համար:

2.21. Սակագնային Պլան՝ Յուքոմի կողմից սահմանված և հրապարակված Ծառայության տեսակ, որով սահմանվում է Ծառայության անվանումը, առանձնահատկությունները, մատուցման պայմանները, արժեքը և այլ տեղեկություններ:

2.22. Սակագնային Փաթեթ(-ներ)՝ մի քանի տարբեր Ծառայություններ իր մեջ ներառող և մեկ անվանմամբ ու արժեքով (գնով) հաշվարկվող Ծառայություն:

2.23. Ծառայության Փաթեթ(-ներ)՝ մեկ Սակագնային պլանում ներառված որոշակի վավերականության ժամկետով հավելյալ բոպեների, կարճ հաղորդագրությունների և այլ ծառայությունների փաթեթներ, որոնցից կարելի է օգտվել առանց ընթացիկ Սակագնային Պլանը փոխելու անհրաժեշտության:

2.24. Համար՝ Յուքոմի, իսկ շարժական հեռախոսակապից օգտվելու և Համարի Տեղափոխելիության դեպքում նաև էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցող այլ օպերատորի համարային ռեսուրսներից Բաժանորդին հատկացված կանչի համար, որը հնարավորություն է տալիս նույնականացնել Ցանցին միացված Սարքավորումը:

2.25. Համարի Տեղափոխելիության Ծառայություն՝ ծառայություն, որը շարժական հեռախոսակապի Ծառայությունից օգտվող Բաժանորդին հնարավորություն է տալիս փոխել շարժական կապի օպերատորին՝ պահպանելով իրեն հատկացված շարժական կապի համարը:

2.26. Հաշվեկշիռ՝ Բաժանորդի Հաշվի տվյալների հիման վրա հաշվարկային եղանակով սահմանված մեծություն, որը հանդիսանում է ժամանակի պահի դրությամբ Բաժանորդի կողմից օգտագործված Ծառայությունների և կատարված վճարումների տարբերությունը:

2.27. Տրաֆիկ (Տեղափոխվող ծավալ)՝ էլեկտրոնային տեղեկատվության միավորների ագրեգացիա, որը ներառում է ձայնային և կարճ հաղորդագրություններ (SMS), ազդակներ/ազդանշաններ և այլ տվյալներ, որոնք փոխանցվում են էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի միջոցով:

2.28. Սարք՝ Ամրակցված ցանցով մատուցվող Ծառայություններ տրամադրելու համար Յուքոմի կողմից օգտագործման իրավունքով Բաժանորդին տրամադրված սարք կամ սարքեր իր (իրենց) պատկանելիքներով և մալուխ(-ներ)ով, որոնց նկարագրությունը ներկայացված է Յուքոմի Վեբ-կայքում:

2.29. Սարքավորում(-ներ)՝ այն տեխնիկական միջոցներն ու սարքերը, որոնց միջոցով Բաժանորդը կարողանում է օգտվել Շարժական կապի ցանցով մատուցվող Ծառայություններից (օրինակ՝ պլանշետ, շարժական հեռախոս և այլն):

2.30. SIM-քարտ՝ Բաժանորդի նույնականացման մոդուլ, որը Բաժանորդի Սարքավորման հետ միասին ապահովում է հասանելիություն Յուքոմի Ցանցին և Շարժական կապի Ծառայություններին:

2.31. Ձեր (Բաժանորդի) Նույնականացման տվյալներ՝ Ձեր անունը, ազգանունը, ծննդյան տարին, ամիսը և ամսաթիվը, Համարը, Դիմումի համարը, Գաղտնաբառը (եթե առկա է), SIM-քարտի համարը, Դիմումի համարը, Ձեր անձը հաստատող փաստաթղթի տվյալները, կատարած վերջին գործողությունները (վճարում, Հաշվեկշռի լիցքավորում, Ծառայության ակտիվացում և այլն) և նմանատիպ այլ տվյալներ, որոնք օգտագործվում են առանձին կամ միասին՝ համաձայն Յուքոմի կողմից սահմանված Կարգի:

2.32. Պահպանման աշխատանքներ՝ Ծառայությունների պատշաճ և շարունակական մատուցումն ապահովելու համար Յուքոմի կողմից իրականացվող՝ Յուքոմի Ցանցի վերազինման, վերականգնման, վերանորոգման, թարմացման, ընդլայնման, փոխարինման, պահպանման, ամրապնդման, վերադասավորման, ինչպես նաև վթարների, թերությունների և անսարքությունների վերացման կամ նմանատիպ այլ աշխատանքներ:

3. Բաժանորդագրում, Բաժանորդային պայմանագիր, Բաժանորդի Ներկայացուցչի իրավասություններ

3.1. Սույն Պայմանները Ձեր կողմից համարվում են ամբողջությամբ և անվերապահորեն ընդունված Դիմումն առձեռն կամ նոտարական կարգով տրված լիազորագրի հիման վրա հանդես եկող Ձեր ներկայացուցչի կողմից Վաճառքի և սպասարկման կենտրոն և/կամ Յուքոմի անունից Ծառայությունների վաճառք իրականացնելու լիազորություն ունեցող աշխատակցին ներկայացնելու պահից (եթե այլ կարգ նախատեսված չէ Յուքոմի կողմից):

3.2. Բաժանորդային Պայմանագիր կնքելու համար Դիմումին կից Դուք պետք է ներկայացնեք նաև Յուքոմի կողմից Ձեզնից պահանջվող փաստաթղթեր, որոնք հաստատում են Ձեր անձը, հասցեն, իրավաբանական անձի, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ պետական գրանցան կամ հաշվառման տվյալները, ներկայացուցչի միջոցով Բաժանորդային Պայմանագիր կնքելու դեպքում՝ նոտարական կարգով հաստատված լիազորագրի և անձը հաստատող փաստաթղթերը, այն տարածքի նկատմամբ, որտեղ պետք է տեղադրվի Սարքը և մատուցվեն Ծառայությունները, Ձեր իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը և/կամ իրավատիրոջ համաձայնությունը, և այլ փաստաթղթեր (այդ թվում բնօրինակ) ու տվյալներ (այսուհետ՝ **Պահանջվող Փաստաթղթեր**):

3.3. Դիմումում Բաժանորդն ընտրում է Ծառայությունների ցանկը և/կամ այն Սակագնային Պլանները/Փաթեթները, որի (որոնց) պայմաններով Բաժանորդը ցանկանում է ստանալ Ծառայությունները:

3.4. Յուքոմի կողմից առաջարկվող Ծառայությունների տեսակները, նկարագրությունները, դրանց մատուցման առանձնահատկություններն ու արժեքները, ինչպես նաև Ծառայություններին վերաբերող բոլոր տեղեկությունները սահմանվում են Յուքոմի կողմից և անվճար հասանելի են Ձեզ Յուքոմի Վեբ-կայքում, Վաճառքի և սպասարկման կենտրոններում:

3.5. Ըստ մատուցվող Ծառայության առանձնահատկությունների՝ Յուքոմը կարող է այդպիսի Ծառայություններից օգտվելու Դիմում ներկայացրած անձի կամ անձանց խմբերի համար սահմանել այլ պայմաններ, որոնք կամրագրվեն Առաջարկի Նկարագրով և/կամ կնքվելիք պայմանագրով:

3.6. Բաժանորդային Պայմանագիր կնքելու/լուծելու, դրանում փոփոխություններ և լրացումներ կատարելու, ինչպես նաև հավելյալ այլ ծառայություններ մատուցելու դիմումների ձևերը և բովանդակությունը սահմանվում են Յուքոմի կողմից, և Ձեր կողմից դրանք չպահպանելու դեպքում Յուքոմն իրավունք ունի չընդունելու դրանք և/կամ ընթացք չտալու:

3.7. Որոշ նյութեր կամ փաստաթղթեր, որոնք հրապարակված և հասանելի են Յուքոմի Վեբ-կայքում, եթե Դուք չեք պահանջում, Ձեզ չեն տրամադրվում թղթային տարբերակով:

3.8. Յուքոմի կողմից սահմանված դեպքերում Ծառայություններին բաժանորդագրումը կարող է իրականացվել Բաժանորդային Պայմանագրով սահմանված փորձնական ժամկետով: Փորձնական ժամկետը տրամադրվում է Ծառայությունը փորձարկելու նպատակով, մասնավորապես՝ պարզելու համապատասխանում է արդյոք այն Ձեր պահանջներին և կարիքներին, առկա է Ցանցի Ծածկույթ և Ծառայություն այն վայրերում, որտեղ Դուք հիմնականում նախատեսում եք օգտվել Ծառայությունից: Փորձնական ժամկետի ընթացքում Բաժանորդային Պայմանագիրը չլուծելու դեպքում համարվում է, որ Ծառայությունը համապատասխանում է Բաժանորդային Պայմանագրին, առաջարկվող պայմաններին և ներկայացվող նկարագրին, ինչպես նաև Ձեր կարիքներին և պահանջներին:

3.9. Փորձնական ժամկետը լրանալուց հետո Բաժանորդային Պայմանագրի լուծումն իրականացվում է տվյալ Ծառայությունից հրաժարման համար սահմանված ընդհանուր հիմունքներով:

3.10. Յուքոմն իրավունք ունի հրաժարվելու Բաժանորդային Պայմանագիրը կնքելուց և/կամ Ծառայություններին կամ դրանց մի մասին հասանելիություն ապահովելուց և/կամ միակողմանի կարգով հրաժարվելու Բաժանորդային Պայմանագիրը կատարելուց՝ լուծված համարելով Բաժանորդային Պայմանագիրը՝ այդ մասին 10 (տասը) օրվա ընթացքում Յուքոմի կողմից նախընտրած ձևով ծանուցելով Բաժանորդին հետևյալ հիմքերից թեկուզ մեկի առկայության դեպքում՝

3.10.1. Տարածքը գտնվում է Ցանցի Հասանելիության Տարածքից դուրս կամ գտնվում է Ցանցի Հասանելիության Տարածքում, սակայն չկան տեխնիկական հնարավորություններ Ծառայությունների մատուցման համար (օրինակ՝ մալուխների քանակն այդ տարածքում/շենքում սպառված է, լիազոր մարմինը թույլ չի տալիս իրականացնելու շենքում մալուխներ մոնտաժելու աշխատանքներ կամ Բաժանորդի շենքում մալուխներ անցկացնելու համար չկան անհրաժեշտ ենթակառուցվածքներ (դիտահորեր, հենասյուներ) և այլն),

3.10.2. մինչև Տարածքում տեղադրված նախկին Սարքերը հայտնաբերելու գործընթացի ավարտը,

3.10.3. Տարածքում մեկ այլ Բաժանորդային պայմանագրի շրջանակներում Յուքոմի կողմից մատուցվում են Ծառայություններ,

3.10.4. Բաժանորդը հանդիսանում է (հանդիսացել է) Յուքոմի Բաժանորդ և Յուքոմի հանդեպ ունի չկատարված պարտավորություն(-ներ) կամ խախտել է Բաժանորդային Պայմանագրի պահանջները,

3.10.5. Բաժանորդը, նախկինում օգտվելով Յուքոմի կողմից առաջարկվող Ծառայություններից կամ խթանիչ առաջարկներից, թույլ է տվել կեղծիքներ կամ չարաշահումներ (այդ թվում՝ Յուքոմի կողմից Բաժանորդային Պայմանագրի գործողությունը դադարեցնելը Բաժանորդի կողմից կետանց թույլ տալու հիմքով և այլն),

3.10.6. Յուքոմի կողմից սահմանված ձևով չի ներկայացվում Դիմումը, Պահանջվող փաստաթղթերը և/կամ այլ անհրաժեշտ տեղեկությունները,

3.10.7. Բաժանորդի կողմից ներկայացված փաստաթղթերում կամ տեղեկություններում առկա են կեղծիքներ կամ սխալ տվյալներ,

3.10.8. Ծառայությանը բաժանորդագրվելու համար դիմող անձը գնահատվում է անհուսալի պարտապան կամ չի բավարարում Յուքոմի կողմից տվյալ Ծառայության համար սահմանված վճարունակության և նմանատիպ այլ պահանջները,

3.10.9. Տարածքը, որտեղ պետք է Ամրակցված ցանցով մատուցվեն Ծառայությունները, Յուքոմի գնահատմամբ հանդիսանում կամ ծառայում է որևէ իրավաբանական անձի և/կամ անհատ ձեռնարկատիրոջ փաստացի

գործունեության վայր և/կամ ֆիզիկական անձի կողմից շահույթ ստանալու կամ այլ տնտեսական գործունեություն իրականացնելու նպատակով օգտագործվող տարածք,

3.10.10. Տարածքի սեփականատերը և/կամ համասեփականտերը դիմել է Յուքոմին՝ Տարածքում (Ամրակցված ցանցով) Ծառայությունների մատուցումը դադարեցնելու համար:

3.11. Որոշ Ծառայություններ մատուցելու համար Յուքոմը կարող է հրաժարվել Բաժանորդային Պայմանագիր կնքելուց կամ դրա կնքման համար կարող է առաջադրել լրացուցիչ պահանջներ, այդ թվում՝ պահանջել պարտավորությունների կատարման ապահովման միջոցներ, եթե օրինակ Բաժանորդն ունի որոշակի ժամկետով Յուքոմի Բաժանորդ մնալու դեռևս չկատարված պարտավորություն, դիմողը չունի մշտական բնակության վայր ՀՀ-ում, հաշվառված չէ ՀՀ տարածքում, ՀՀ քաղաքացի չէ կամ ՀՀ-ում չունի համապատասխան կացության կարգավիճակ և/կամ Յուքոմի կողմից նախատեսված այլ դեպքերում:

3.12. Բաժանորդային Պայմանագիր կնքելուց, Ծառայություններին կամ դրանց մի մասին հասանելիություն ապահովելուց, սարքավորումների վաճառքից կամ գումարային սահմանաչափի սահմանումից կամ փոփոխումից առաջ Յուքոմն իրավունք ունի իրականացնելու Ձեր վճարունակության ստուգում օրենքով չարգելված ցանկացած եղանակով և աղբյուրից, այդ թվում՝ Ձեզնից պահանջելով ներկայացված տեղեկատվությունը հիմնավորող լրացուցիչ փաստաթղթեր, կատարելով համապատասխան հարցումներ և/կամ պահանջելով լրացուցիչ ապահովման միջոցներ:

3.13. Յուքոմն իրավունք ունի սահմանափակելու յուրաքանչյուր Բաժանորդին տրամադրվող Սարքերի, Սարքավորումների և SIM-քարտերի կամ Ծառայությունների քանակը:

3.14. Կապ հաստատելով Զանգերի սպասարկման կենտրոնի հետ զանգի կամ կապի այլ միջոցներով և անցնելով Բաժանորդի նույնականացման փուլը՝ Բաժանորդը կարող է այնպիսի փոփոխություններ կատարել Բաժանորդային Պայմանագրում, որոնք թույլատրելի են համարվում Յուքոմի կողմից: Նշված դեպքերում որևէ գրավոր փաստաթուղթ Յուքոմի և Բաժանորդի միջև չի կնքվում, իսկ հավաստումը (ապացույցը) առ այն, որ Բաժանարոդային Պայմանագրում փոփոխությունները կատարվել են Բաժանորդի կողմից, հանդիսանում է Բաժանորդի կողմից կատարված առաջին վճարումը:

3.15. Ձեր ներկայացուցչին Ձեր անունից գործողություններ կատարելու լիազորություն տրամադրող փաստաթղթի գործողության դադարման կամ անվավերության դեպքում Դուք պարտավոր եք անմիջապես տեղեկացնել Յուքոմին: Մինչև նման փոփոխության մասին Յուքոմին տեղեկացնելը Ձեր ներկայացուցչի պահանջների կատարմանն ուղղված Յուքոմի գործողությունները և դրանց արդյունքում ծագած պարտավորությունները համարվում են իրավաչափ և կատարված Ձեր անունից:

3.16. Ձեր ներկայացուցիչն իրավունք ունի դիմում ներկայացնելու Ձեզ մատուցված Ծառայությունների Հաշվի վերծանումները ստանալու համար (Հեռախոսակապի Ծառայության դեպքում միայն Ձեր կողմից կատարված ելքային զանգերի և մուտքային այն զանգերի Հաշվի վերծանումները, որոնց համար կատարվում է գանձում): Համարի անվանափոխություն, Համարի տեղափոխություն Յուքոմի Ցանց կամ նոր բաժանորդային պայմանագրի կնքում, ինչպես նաև Յուքոմի կողմից սահմանված մի շարք այլ գործարքների դեպքում Ձեր ներկայացուցիչը պետք է ներկայացնի միայն նոտարական հաստատմամբ նման իրավասություն տվող լիազորագրի բնօրինակը:

3.17. Եթե Բաժանորդային պայմանագրի կնքումից հետո պարզվի, որ Ձեր կողմից նշված Տարածքի հասցեն չի համապատասխանում Յուքոմի Բիլինգային համակարգում առկա հասցեների բազային (որը վերցված է ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտեից և պարբերաբար թարմացվում է), Յուքոմն իրավունք ունի միակողմանի կարգով ուղղելու (փոփոխելու) Բաժանորդային պայմանագրում նշված Տարածքի հասցեն:

4. Ծառայություններ

4.1. Բաժանորդագրման տեսակը, Սակագնային Պլանը և/կամ Ծառայություններն բաժանորդագրման պահին ընտրում եք Դուք Ձեր ցանկությանն ու պահանջներին համապատասխան:

4.2. Յուքոմն իրավասու է սույն Պայմանների 17.7. կետով նախատեսված կարգին համապատասխան (միակողմանիորեն) փոփոխել Ծառայության Արժեքը, Սակագնային Պլանը/Փաթեթը և/կամ դրանց մատուցման պայմանները:

4.3. Ծառայությունները, ըստ իրենց տեսակի, մատուցվում են Յուքոմի Ամրակցված և/կամ Շարժական կապի ցանցերով, որոնցից յուրաքանչյուրն ունի իր մատուցման առանձնահատկություններն ու Կանոնները:

4.4. Բաժանորդային Պայմանագիր կնքելիս Յուքոմի կողմից լռելյայն ակտիվացվում են այն հավելյալ Ծառայությունները, որոնց համար լրացուցիչ վճարումներ չեն պահանջվում (եթե այլ բան սահմանված չէ Յուքոմի կողմից):

4.5. Որոշ Ծառայություններ Ձեր կողմից կարող են ակտիվացվել Յուքոմի Վաճառքի և սպասարկման կենտրոն այցելելու, ձայնային մենյուի, Ձեր անձնական էջի, Ձեր սարքավորման կարգաբերումների միջոցով կամ այլ եղանակներով:

4.6. Նախքան լրացուցիչ վճարում պահանջող Ծառայությունների ակտիվացումը, Դուք պարտավոր եք ստուգել պատվիրվող Ծառայությունն օգտագործելու համար Ձեր սարքավորման հնարավորությունները և սահմանափակումները՝ հասկանալու համար, թե տվյալ սարքավորմամբ Դուք կարող եք օգտվել ակտիվացվող Ծառայությունից, թե ոչ:

4.7. Որոշ Ծառայություններ Ձեզ կարող են մատուցվել, եթե Ձեր վերջնակետային սարքավորումը համապատասխանում է նման Ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ տեխնիկական պահանջներին:

4.8. Դուք իրավունք ունեք, Յուքոմի կողմից սահմանված կարգով, փոփոխել Ձեր բաժանորդագրման տեսակը, Սակագնային Պլանը կամ միևնույն Սակագնային Պլանի ներսում ծառայությունների ցանկը՝ պայմանով, որ այդպիսի պահանջ ներկայացնելու պահին Յուքոմի նկատմամբ չունեք չմարված պարտք, եթե այլ բան սահմանված չէ Յուքոմի կողմից, ընդ որում, Յուքոմն իրավունք ունի սահմանելու լրացուցիչ վճար յուրաքանչյուր այդպիսի փոփոխության համար:

4.9. Ծառայությունների, Սակագնային Պլանների փոփոխություն կատարելիս Ձեր Հաշվին առկա դրական Հաշվեկշիռը, բոնուսները, ավտոմատ գեներացված առաջարկներն ու ծառայությունները, ինչպես նաև այլ արտոնությունները ենթակա չեն վերադարձման կամ փոխանցման Ձեր նոր Հաշվին, Համարին և/կամ Ծառայությանը, եթե այլ բան չի սահմանվում Յուքոմի կողմից:

4.10. Բաժանորդագրման տեսակի, Սակագնային Պլանի, Ծառայությունների ցանկի փոփոխությունը և լրացուցիչ Ծառայությունների ակտիվացումն իրականացվում է Յուքոմի կողմից հաստատված ձևի դիմումը/համաձայնագիրը և Պահանջվող փաստաթղթերը ներկայացնելով առձեռն, իսկ Յուքոմի կողմից սահմանված դեպքերում նաև կապի այլ միջոցներով:

4.11. Ձեր Նույնականացման տվյալներն օգտագործվում են բաժանորդագրման տեսակի, Սակագնային Պլանի, Ծառայությունների (դրանց տեսակների) փոփոխության և լրացուցիչ Ծառայությունների ակտիվացման, ինչպես նաև Յուքոմի կողմից Ձեզ տեղեկատվության տրամադրման, Ծառայությունների դիմաց վճարելու և Յուքոմի կողմից սահմանված այլ դեպքերում:

4.12. Ծառայությունների տեսակների և Արժեքների, Առաջարկի նկարագրի, Սակագնային Պլանների և Փաթեթների Ցանցի Ծածկույթի/Հասանելիության Տարածքի, բաժանորդային պարտքերի և գանձված գումարների, վերաբերյալ տեղեկատվություն Բաժանորդը կարող է ստանալ Վաճառքի և սպասարկման կենտրոններից կամ զանգահարելով Զանգերի սպասարկման կենտրոն Վեբ-կայքում նշված

հեռախոսահամարներից որևէ մեկով, ինչպես նաև գրավոր կամ էլեկտրոնային նամակ ուղարկելով Յուքոմին:

4.13. Ծառայության մի առաջարկից, որը ենթադրում է որոշակի ժամկետում Յուքոմի Բաժանորդ մնալու պարտավորություն, մեկ այլ առաջարկի անցումը (առանց Բաժանորդային Պայմանագրով/համաձայնագրով նախատեսված տուգանքը վճարելու) հնարավոր է միայն սահմանված ժամկետի ավարտից հետո, իսկ մինչև դրա ավարտը՝ միայն Յուքոմի բացառիկ հայեցողությամբ, հակառակ դեպքում նման անցումը կդիտվի որպես Ձեր ստանձնած պարտավորության խախտում և Յուքոմն իրավունք կունենա Ձեզնից պահանջել սահմանված տույժերը, տուգանքները և/կամ հրաժարագինը:

4.14. Բաժանորդային Պայմանագրի կողմ դառնալով՝ Բաժանորդը տալիս է իր համաձայնությունը Յուքոմի Ցանցի (և ոչ միայն) միջոցով ստանալու գովազդային, առևտրային և/կամ այլ հաղորդագրություններ, նյութեր և/կամ տեղեկություններ: Դրանք ստանալուց հրաժարվելու դեպքում Բաժանորդը պետք է տեղեկացնի Յուքոմին:

5. Ծառայությունների մատուցումը

5.1. Յուքոմը Ծառայությունները մատուցում է ՀՀ օրենսդրության, Յուքոմին տրամադրված լիցենզիաներին և թույլտվություններին, Բաժանորդային Պայմանագրին, Յուքոմի ներքին ընթացակարգերին և քաղաքականությանը համապատասխան:

5.2. Շարժական կապի Ծառայություններ մատուցելու համար Յուքոմը Ձեզ հատկացնում է Համար և տրամադրում SIM-քարտ (SIM-քարտին հասանելիությունն ավելի ապահով է, եթե իրականացվում է PIN կոդի միջոցով):

5.3. Համարը հատկացվում է Բաժանորդին համաձայն Յուքոմի համապատասխան Կարգի և Դուք իրավունք չունեք պահանջել կոնկրետ Համար, եթե այդ Կարգի համաձայն այն չի կարող Ձեզ տրամադրվել:

5.4. Կոնկրետ Համարի տրամադրման համար Յուքոմը կարող է սահմանել լրացուցիչ վճար կամ լրացուցիչ պարտավորություններ:

5.5. Ամրակցված ցանցով Ծառայություններ մատուցելու համար, Բաժանորդային Պայմանագրի կնքումից հետո Բաժանորդի Տարածքում Յուքոմի մասնագետների կողմից հնարավորինս սեղմ ժամկետներում տեղադրվում և կարգաբերվում է Սարքը և միացվում Յուքոմի Ամրակցված Ցանցին:

5.6. Եթե Բաժանորդն ունի այնպիսի սերտիֆիկացված սարք, որով, ըստ Յուքոմի մասնագետների կարծիքի, հնարավոր կլինի պատշաճ և Ցանցի համար անվտանգ օգտվել Ծառայություններից, ապա Բաժանորդի ցանկության դեպքում Յուքոմը կարող է Ամրակցված ցանցով տրամադրվող Ծառայությունները մատուցել այդ սարք(-եր)ով:

5.7. Ծառայությունների մատուցումը Ձեզ հնարավոր է, եթե Բաժանորդային Պայմանագրի բոլոր պահանջները Ձեր կողմից կատարվել են:

5.8. Սույնով Դուք համաձայն եք, որ Ծառայությունները մատուցվում են Յուքոմի Ցանցի առկա տեխնիկական հնարավորություններին և թողունակությանը, Ցանցի Ծածկույթին/Հասանելիության Տարածքին, օգտագործվող սարքավորումների հնարավորություններին ու առանձնահատկություններին համապատասխան և դրանց սահմաններում:

5.9. Յուքոմի Ցանցի տեխնիկական հնարավորությունների, Ցանցի Ծածկույթի/Հասանելիության Տարածքի և դրանց թարմացումների մասին տեղեկությունները Բաժանորդին հասանելի են դարձվում Յուքոմի Վեբ-կայքի, Վաճառքի և սպասարկման կենտրոնների, ինչպես նաև Զանգերի սպասարկման կենտրոնի միջոցով:

5.10. Ձեր կողմից շարժական կապի Ծառայություններից օգտվելը Ցանցի Ծածկույթի սահմաններում սահմանափակված չէ կոնկրետ տարածքով, եթե այլ բան չի սահմանվում Յուքոմի կողմից կամ բխում Ծառայությունների էությունից:

5.11. Դուք համաձայնում և ընդունում եք, որ Յուքոմը ձեռնարկում է հնարավոր ողջամիտ միջոցներն ապահովելու համար Ծառայությունների պատշաճ և շարունակական մատուցումը և Բաժանորդի հասանելիությունը Ծառայությանը և Յուքոմի Ցանցին, սակայն Ծառայությունների պատշաճ և շարունակական մատուցումն ապահովելու Յուքոմի պարտականությունը լավագույն ջանքերը գործադրելու պարտականություն է (best effort), և ոչ ավելին:

5.12. Դուք համաձայնում և ընդունում եք, որ Ծառայություններից օգտվելու և/կամ դրանց հասանելիություն ունենալու հնարավորությունը կամ Ծառայությունների որակը կախված է ստորև նշված այնպիսի հանգամանքներից և գործոններից, որոնք կարող են առաջացնել Ձեզ մատուցվող Ծառայության ընդհատումներ, որակի վատացումներ, կապի արագության տատանումներ կամ այլ խափանումներ, և որոնք դուրս են Յուքոմի վերահսկողությունից: **Այդպիսի հանգամանքներ ու գործոններ են՝**

5.12.1. ոչ բարենպաստ աշխատանքային միջավայրը (խոնավության աստիճան, սարքավորման բնականոն աշխատանքի համար չնախատեսված շատ բարձր կամ ցածր ջերմաստիճան և այլն),

5.12.2. Ձեր սարքավորման որակը, հնարավորությունները և առանձնահատկությունները, տեխնիկական անսարքությունը կամ սխալ կարգաբերումները (Ձեզ մատուցվող Ծառայության հետ անհամատեղելի օպերացիոն համակարգերը, վիրուսները և այլն),

5.12.3. այլ օպերատորների, այդ թվում՝ միջազգային օպերատորների ցանցերի և սարքավորումների որակը, առանձնահատկություններն և հնարավորությունները, նրանց ցանցում առկա սահմանափակումները, վթարները, անսարքություններիը, վերջիններիս աշխատանքային ռեժիմը, ցանցային կամ կայանի վթարները կամ անսարքությունները,

5.12.4. Շարժական կապի ցանցով մատուցվող Ծառայությունների և Հեռուստառադիոծրագրերի համար՝ եղանակային պայմանները և մթնոլորտային երևույթները, ռադիոհաճախականությունների էլեկտրամագնիսական խանգարումները, ռադիոալիքների հասանելիությունը սահմանափակող գործոնների ազդեցությունը, Յուքոմի կայանի և սարքավորումների և Ձեր սարքավորման (հեռախոս, մոդեմ և Ծառայություններից օգտվելու համար օգտագործվող այլ սարքավորումներ) միջև եղած հեռավորությունը, տեղական ռելիեֆի առանձնահատկությունները, ռադիոալիքների տարածումը և խափանումների այլ աղբյուրների գոյությունը, ինտերֆերենցիաները, հանգամանքներ, որոնք խոչընդոտներ են ստեղծում ռադիոսարքավորումների նորմալ գործունեության համար, Ծառայություններից օգտվելու վայրը (ծածկույթից դուրս տարածք, ստորգետնյա տարածքներ, շենքերին մոտ լինելը, թունելները, նկուղները և այլ ստորգետնյա տարածքները) և ժամանակը (Յուքոմի Ցանցի առավել ծանրաբեռնված ժամեր, միաժամանակ օգտագործողների թիվը սպասարկման տվյալ վայրում),

5.12.5. ֆորս-մաժորային իրավիճակները (ջրհեղեղներ, երկրաշարժեր, պատերազմ, պետական մարմինների որոշումներ, էլեկտրասնուցման խափանումներ, համաճարակներ և այլն),

5.12.6. կամ նմանատիպ այլ հանգամանքները:

5.13. Յուքոմը պարտավոր է վերականգնել բաժանորդին մատուցվող Ծառայություն(-ներ)ը՝ ընդհատման պատճառի վերացումից հետո՝ 48 ժամվա ընթացքում:

5.14. Մինչև Ծառայություններին բաժանորդագրվելը և Ձեր կարիքների համար դրանք օգտագործելը **կարևոր է իմանալ, որ Յուքոմը չի երաշխավորում՝**

5.14.1. այնպիսի հանգույցների կամ սերվերների հետ տեղեկատվության փոխանակումը, որոնք ժամանակավոր կամ մշտապես անհասանելի են ինտերնետային ցանցի միջոցով,

5.14.2. Ծառայությունների մատուցման ընթացքում ընդհատումների, սխալների, արագության և որակի անկումների, տատանումների և այլ խափանումների ու խաթարումների բացակայությունը, ինչպես նաև Ծառայության հասանելիության անընդհատությունը,

5.14.3. Յուքոմի Ցանցի հետ հասանելիության հաստատումը՝ նախապես հայտարարված տեսական կամ միջին արագության առավելագույն հնարավորությամբ:

5.15. Յուքոմի Ցանցի անխափան աշխատանքը, անվտանգությունն ու Ծառայության որակն ապահովելու, Յուքոմի Ցանցի հնարավորությունները հավասարաչափ բաշխելու, որևէ կոնկրետ Շարժական ցանցի բազային կայանի վրա գերբեռնվածությունը նվազեցնելու, ինչպես նաև Ծառայությունների հասանելիությունն ապահովելու համար Յուքոմն ինքն է սահմանում անհրաժեշտ տեխնիկական միջոցները, այդ թվում՝ Յուքոմն իրավունք ունի իր հայեցողությամբ ձեռնարկելու իրավիճակին համապատասխան միջոցառումներ, կիրառելու Ծառայությունների ծավալի և/կամ արագության սահմանափակումներ և սահմանելու առաջնահերթություններ:

5.16. Ձեզ անհարմարություն չպատճառելու նկատառումով Ձեր դրական հաշվեկշիռը (ամսավճարը) կամ բացասական հաշվեկշռի սահմանաչափն սպառելիս Յուքոմը չի ընդհատի Ձեզ այդ պահին մատուցվող ծառայության սեսիան (զանգ, SMS, GPRS), որի դիմաց կկատարվի համապատասխան գանձում:

6. Ծառայություններից օգտվելը

6.1. Ձեր կողմից օգտագործվող սարքավորումը պետք է լինի սերտիֆիկացված, Յուքոմի Ցանցի, Ծառայությունների ու SIM-քարտի հետ համատեղելի և համապատասխանի ՀՀ օրենսդրության և Բաժանորդային պայմանագրի պահանջներին:

6.2. Դուք իրավունք չունեք՝

6.2.1. Ծառայությունից օգտվել որևէ եղանակով, որը կարող է ազդել Յուքոմի և/կամ այլ օպերատորների էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի կամ սարքավորումների ապահով և անխափան աշխատանքի վրա:

6.2.2. Ձեզ մատուցվող Ծառայությունները վճարովի կամ անհատույց առաջարկելու/մատուցելու երրորդ անձանց,

6.2.3. Ծառայություններն օգտագործել էլեկտրոնային հեռահաղորդակցության ծառայություններ մատուցելու, գովազդային, տեղեկատվական կամ այլ բնույթի զանգվածային հաղորդագրություններ ուղարկելու, քվեարկություն, վիկտորինաներ, հարցումներ, մրցույթներ, հետազոտություններ, աճուրդներ, վիճակախաղեր, արշավներ անցկացնելու և նմանատիպ այնպիսի գործողություններ կատարելու նպատակով, որոնք ուղղված են շահույթի ստացմանը, գաղափարների կամ գովազդի տարածմանը՝ առանց Յուքոմի նախնական գրավոր համաձայնության:

6.3. Դուք իրավունք ունեք Յուքոմի Վաճառքի և սպասարկման կենտրոն(-ներ)ից պահանջել դիմելու պահին նախորդող 12 (տասներկու) ամիս ժամանակահատվածի համար հեռախոսակապի ծառայությունների Ձեր մուտքային և ելքային զանգերի ու ելքային կարճ հաղորդագրությունների վերաբերյալ (մուտքային կարճ հաղորդագրությունների մասին տեղեկատվություն չի տրամադրվում) մանրամասն տեղեկություններ Հաշվի քաղվածքի կամ Յուքոմի համար ընդունելի այլ եղանակով, եթե այդ զանգերն ու կարճ հաղորդագրությունները սակագրվել են և Ձեզ համար ծառայության վճար առաջացրել: Ձեզ մատուցված այլ Ծառայությունների (որոնք Ձեզ համար վճար են առաջացրել) Հաշվի վերծանում Ձեզ տրամադրվում է ոչ ավել, քան Յուքոմին դիմելու պահին նախորդող 6 (վեց) ամիսների համար: Հաշվի քաղվածք և վերծանում Ձեզ տրամադրելու համար Յուքոմն իրավասու է վճարումներ գանձել:

6.4. Յուքոմը Ձեզ տեղեկատվություն չի տրամադրում Ձեր ուղարկած և ստացած կարճ հաղորդագրությունների բովանդակության մասին:

6.5. Դուք պարտավոր եք՝

6.5.1. Ծառայություններից օգտվել ՀՀ օրենսդրությանը, Բաժանորդային Պայմանագրին և Յուքոմի կողմից սահմանված այլ կանոններին և պայմաններին համապատասխան՝ առանց խախտելու Յուքոմի, այլ Բաժանորդների և երրորդ անձանց իրավունքներն ու շահերը:

6.5.2. չօգտագործել Ծառայություններն այլ օպերատորներից և ցանցերից ելքային Տրաֆիկի փոխանցում իրականացնելու համար, ինչպես նաև այնպիսի նպատակներով, որոնք հակասում են պետության շահերին, բարոյականության համընդհանուր նորմերին և հասարակական կարգին,

6.5.3. չիրականացնել գործողություններ, որոնք ուղղված են Յուքոմի Ցանցի նորմալ գործունեության խաթարմանը կամ նպատակ ունեն փոփոխել Յուքոմի Ցանցի կամ սարքավորման կամ ծրագրային ապահովման կարգաբերումները,

6.5.4. Ծառայություններն օգտագործել բացառապես այդ նպատակով, որը Ձեզ տրամադրվում է և տեխնիկական տարբեր լուծումներ կիրառելով (անկախ կիրառվող տեխնոլոգիայից) Շարժական կապի Ծառայությունները չօգտագործել ամրակցված կապի ծառայություններ մատուցելու/ստանալու համար և հակառակը,

6.5.5. չիրականացնել գործողություններ չթույլատրված հասանելիություն ստանալու և նման հասանելիությունը օգտագործելու նպատակով,

6.5.6. Յուքոմի Ցանցով չփոխանցել տեղեկատվություն կամ չիրականացնել գործողություններ, որոնք կարող են ստեղծել չարդարացված բարձր ծանրաբեռնվածություն Յուքոմի Ցանցում կամ սարքավորումների վրա,

6.5.7. պահպանել ցանկացած տեխնիկական կամ տեղեկատվական ռեսուրսի օգտագործման կանոնները,

6.5.8. չկեղծել սեփական IP հասցեն, ինչպես նաև այլ ցանցային պրոտոկոլներում և ինտերնետում տվյալներ փոխանցելիս օգտագործվող IP հասցեները:

6.6. Ձեր վերջնակետային սարքավորումից վիրուսային ծրագրերի և/կամ սպամի առաքման դեպքում կհամարվի, որ վնասը պատճառվել է Ձեր գործողության կամ անգործության հետևանքով:

7. Սարքի, SIM-քարտի և այլ սարքավորումների օգտագործումը և պահպանումը

7.1. Յուքոմի և Բաժանորդի միջև Սարքի հանձնում-ընդունումն իրականացվում է համապատասխան ակտով (այսուհետ՝ Հանձնման-ընդունման ակտ), որը կազմում է Բաժանորդային Պայմանագրի անբաժանելի և բաղկացուցիչ մասը:

7.2. Բացառությամբ սույն Պայմանների 5.6 կետում նախատեսված դեպքի՝ Յուքոմի կողմից տրամադրվող Սարքերը, Յուքոմի կողմից ցանկացած ավելացված (փոփոխված, վերանորոգված) սարքավորումների, ինչպես նաև մալուխների հետ միասին, համարվում են Յուքոմի սեփականությունը և Բաժանորդը չի կարող դրանք փոփոխության ենթարկել, վճարովի կամ անհատույց փոխանցել (տրամադրել) երրորդ անձի, եթե այլ բան գրավոր ձևով համաձայնեցված չէ Յուքոմի և Բաժանորդի միջև:

7.3. Սարքի սխալ օգտագործման, պատահական կորստի, վնասվածքի կամ հափշտակության ռիսկը փոխանցվում է Բաժանորդին՝ Հանձնման-ընդունման ակտը ստորագրելու պահից, և այդ պահից սկսած Բաժանորդն է պատասխանատվություն կրում Սարքի համար:

7.4. Սարքի տեղադրումը, կարգաբերումը և տեղափոխումն իրականացվում է Յուքոմի կողմից, եթե այլ բան չկա սահմանված Յուքոմի կողմից:

7.5. Բաժանորդը պարտավոր է՝

7.5.1. Յուքոմի կողմից տրամադրված սարքավորումը, SIM-քարտը և Սարքը չօգտագործել անհամատեղելի այլ սարքավորումների հետ համատեղ կամ որևէ այլ կերպ, որը կարող է վնաս հասցնել Յուքոմի և/կամ այլ օպերատորների էլեկտրոնային հաղորդակցության ցանցերին կամ սարքավորումներին կամ ազդել դրանց գործառնության վրա,

7.5.2. Սարքին վերաբերվել խնամքով, պահպանել պատշաճ և սարքին վիճակում,

7.5.3. Սարքն օգտագործել միայն այն վայրում, որտեղ այն տեղադրվել և կարգաբերվել է Յուքոմի մասնագետների կողմից և չտեղափոխել Սարքն առանց Յուքոմի թույլտվության,

7.5.4. չվերանորոգել Սարքն առանց Յուքոմի գրավոր համաձայնության,

7.5.5. Սարքի կամ Սարքավորման կորստի, հափշտակության, Ձեր կամ երրորդ անձի կողմից վնասման դեպքում այդ մասին, ոչ ուշ քան 3 (երեք) օրվա ընթացքում տեղեկացնել Յուքոմին (ներկայացնելով Յուքոմի կողմից պահանջվող փաստաթղթերը) հակառակ դեպքում Դուք չեք կարող պահանջել նվազեցնելու Ձեր ամսական վճարը՝ այդ օրերի քանակին համապատասխանող վճարների չափով:

7.5.6. Յուքոմի կողմից տրամադրված սարքավորման, Սարքի և/կամ SIM-քարտը վերադարձնելու պահանջ ստանալու պահից այլևս չօգտագործել և վերադարձնել դա/դրանք Յուքոմին,

7.5.7. զերծ մնալ SIM-քարտի, Յուքոմի տրամադրած սարքավորման և Սարքի ոչ պատշաճ, անօրինական և չարաշահումներով օգտագործումից և թույլ չտալ դրա օգտագործումը չլիազորված անձանց կողմից,

7.5.8. Բաժանորդային Պայմանագրի լուծման դեպքում (անկախ լուծման պատճառներից) կամ որոշակի Ծառայություն(-ներ)ի մատուցումը դադարեցնելու դեպքում Սարք(-եր)ը 15 (տասնհինգ)-օրյա ժամկետում սարքին վիճակում (հաշվի առնելով դրանց բնական մաշվածությունը) վերադարձնել Յուքոմին՝ Յուքոմի մասնագետների համար Սարք(-եր)ն ապամոնտաժելու հնարավորություն ստեղծելով կամ դրանք ինքնուրույն ապամոնտաժելով:

7.6. Սույն Պայմանների 7.5.8. կետում նշված 15(տասնհինգ)-օրյա ժամկետում Բաժանորդի կողմից Սարք(-եր)ը չվերադարձնելու դեպքում Յուքոմն իրավունք ունի Բաժանորդից պահանջելու Սարք(-եր)ը կամ Վեբ-կայքում հրապարակված Սարք(-եր)ի արժեքը:

7.7. Յուքոմը պարտավորվում է, իր համար հնարավոր ամենամոտ ժամկետում Բաժանորդին տրամադրված Սարքն անվճար փոխարինել նորով, եթե Յուքոմի կողմից այն ճանաչվել է արտադրական թերություն ունեցող:

7.8. Շարժական կապի Ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ Սարքավորումը ձեռք է բերվում Ձեր կողմից՝ Ձեր հաշվին և հայեցողությամբ, և Դուք եք պատասխանատու դրա տեղակայման, կարգաբերումների և պատշաճ աշխատանքի համար, եթե այլ բան չի սահմանվում Յուքոմի կողմից:

7.9. Որոշ Ծառայությունների դեպքում Յուքոմը կարող է առաջարկել Սարքավորումներ հատուկ պայմաններով, այդ թվում՝ որոշակի ժամկետում Յուքոմի Բաժանորդը մնալու պարտավորությամբ կամ Յուքոմի կողմից սահմանված այլ պարտավորությամբ: Յուքոմը կարող է նաև առաջարկել սարքավորումներ օգտագործման իրավունքով կամ այլ հիմունքներով:

7.10. Եթե Սարքավորումը սեփականության իրավունքով Ձեզ չի պատկանում, Դուք իրավասու չեք այլ անձի զիջել, վաճառել, վարձակալության տալ կամ որևէ այլ կերպ փոխանցել այլ անձի կամ որևէ փոփոխություն կատարել դրանում, ինչպես նաև Սարքավորման վնասման, կորստի կամ հափշտակության դեպքում պարտավոր եք Յուքոմին վճարել դրա արժեքն անմիջապես:

7.11. Յուքոմը հանդիսանում է Ձեզ տրամադրվող SIM-քարտի միակ սեփականատերը, բացառությամբ դրա վրա գտնվող Ձեր սեփականությունը հանդիսացող տեղեկատվության:

7.12. SIM-քարտը Ձեզ հանձնելու պահից Ձեզ են անցնում դրա վնասման, բնական մաշվածության, կորստի, հափշտակության և ոչ լիազորված օգտագործման ռիսկերը:

7.13. Յուքոմը Բաժանորդի դիմումի հիման վրա պարտավոր է (իր համար հնարավոր ամենասեղմ ժամկետներում) անվճար փոխարինել այն SIM-քարտը, որը ճանաչվել է թողարկված արտադրական թերությամբ: Մնացած դեպքերում Յուքոմը կարող է SIM-քարտի վերաթողարկման և/կամ փոխարինման համար Ձեզնից հավելյալ վճար գանձել:

7.14. Դուք իրավասու չեք այլ անձի զիջել, վաճառել, վարձակալության տալ կամ այլ կերպ երրորդ անձի փոխանցել, վնասել կամ ոչնչացնել SIM Քարտը:

7.15. SIM-քարտի վրա գրանցված նույնականացնող տեխնիկական տվյալները կրկնօրինակելու ցանկացած փորձ արգելվում է, և Դուք դրա համար պատասխանատվություն եք կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.16. Յուքոմն իրավասու է Բաժանորդային Պայմանագրի լուծման պահից կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ ժամկետում SIM-քարտը և/կամ դրան ամրակցված Համարը տրամադրել այլ անձի:

7.17. Տեխնիկական կամ այլ անհրաժեշտությունից ելնելով՝ Յուքոմն իրավունք ունի փոխելու Ձեզ տրամադրված Համարը կամ SIM Քարտը՝ այդ մասին նախապես Ձեզ ծանուցելով:

7.18. SIM-քարտի կամ Սարքավորման կորստի կամ հափշտակության դեպքում Ձեր Ծառայությունները կասեցնելու համար Դուք պարտավոր եք Յուքոմին անհապաղ տեղեկացնել այդ մասին:

8. Գներ և գանձումներ

8.1. Յուքոմն ինքն է սահմանում և իրավասու է միակողմանի կարգով փոփոխել Ծառայությունների արժեքները՝ սույն Պայմանների 17.7. կետին համապատասխան:

8.2. Յուքոմն իրավասու է Ձեզնից գանձել վճարներ (տույժեր) սահմանափակված կամ կասեցված Ծառայությունների վերականգնման, SIM-քարտի վերաակտիվացման կամ ապամոնտաժված մալուխներն ու Սարքը նորից մոնտաժելու համար:

8.3. Ծառայությունների և SIM-քարտի միջոցով տրամադրվող հավելյալ ծառայությունների օգտագործման արդյունքում առաջացած ծախսերը կրում եք Դուք:

8.4. Մատուցված Ծառայությունների համար գանձվող գումարները և մատուցված Ծառայությունների ծավալները հաշվարկվում են Յուքոմի Բիլինգային Համակարգի կամ այլ օպերատորների և ծառայություն մատուցողների կողմից ներկայացված տվյալներով (օրինակ՝ ռոումինգում Ծառայություններ մատուցելիս): Ծառայությունների ծավալը հաշվետու ամսվա ավարտից հետո կարող է ճշգրտվել:

8.5. Եթե առաջանում է վեճ մատուցված Ծառայությունների ծավալի վերաբերյալ, հաշվարկների համար հիմք են ընդունվում Յուքոմի, իսկ որոշ Ծառայությունների դեպքում՝ այլ օպերատորների և ծառայություն մատուցողների կողմից ներկայացված տվյալները:

8.6. Հեռախոսակապի ծառայությունների դիմաց գանձումն իրականացվում է Սակագնային Պլանին կամ Առաջարկի Նկարագրին համապատասխան ամսավճարի կամ օրավճարի չափով և/կամ ելնելով հեռախոսային զանգի տևողությունից, Ձեր կողմից կատարված հարցումների քանակից, ակտիվացված և/կամ օգտագործված Ծառայությունների քանակից, ընդունված, փոխանցված, ուղարկված, մշակված և/կամ պահպանված տեղեկատվության քանակից և/կամ ծավալից՝ ըստ սակագնային/տարիֆիկացման միավորի, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ և/կամ Յուքոմի կողմից սահմանված այլ պարամետրերով:

8.7. Զանգի տևողության հաշվարկն իրականացվում է կանչվող անձի պատասխանելու առաջին վայրկյանից մինչև զանգող կամ կանչվող անձի կողմից անջատումը կամ Ձեր սարքավորման անջատվելը, եթե այլ բան չի սահմանվում Յուքոմի կողմից որոշ Ծառայությունների համար:

8.8. Զանգը համարվում է պատասխանված, և զանգի տևողության հաշվարկը և համապատասխան գանձումներն իրականացվում են նաև հետևյալ սարքավորումների պատասխանի/ազդանշանի դեպքերում՝

8.8.1. Տվյալների փոխանցման սարքավորման (օրինակ՝ մոդեմ, ֆաքսիմիլային ապարատ և այլ սարքավորում, որոնք աշխատում են տեղեկատվության ավտոմատ ընդունման ռեժիմում), կամ Բաժանորդի այլ սարքավորման, որն ապահովում կամ նմանարկում է տվյալների փոխանցման հնարավորություն կանչվող անձի բացակայության դեպքում

8.8.2. Բաժանորդի սարքավորման, ինքնապատասխանիչ, ձայնային փոստ:

8.9. Ինտերնետ հասանելիության ծառայության դեպքում գանձումն իրականացվում է Ձեր ընտրած Սակագնային Պլանին կամ Առաջարկի Նկարագրին համապատասխան (ամսավճարի, օրավճարի և/կամ ըստ օգտագործված ծավալի (բայթերի)), կամ Բաժանորդային Պայմանագրով սահմանված այլ կարգով:

8.10. Հաշվի առնելով Ցանցի աշխատանքի տեխնիկական առանձնահատկությունները՝ Յուքոմն իրավունք ունի սահմանելու մեկ չընդհատվող կամ ակտիվացված, սակայն չօգտագործվող կապի սեանսի՝ հեռախոսազանգի, վիդեոզանգի, ինտերնետ սեսիայի (և այլն) առավելագույն տևողություն:

8.11. Եթե Դուք օգտվում եք այնպիսի Ծառայությունից (ռոումինգ ծառայություն, միջազգային ելքային ծառայություններ և այլն), որի դիմաց հաշվարկված վճարը նշված պահի դրությամբ (տեխնիկական կամ մի շարք այլ առանձնահատկություններով պայմանավորված) տեսանելի չէ Յուքոմի Բիլինգային Համակարգում, ապա այդ Ծառայության համար հաշիվը Ձեզ է ներկայացվում այն Բիլինգային Համակարգում տեսանելի դառնալու (հաշվարկվելու) պահից, որը Դուք պարտավոր եք անմիջապես վճարել (անգամ, եթե Բաժանորդային Պայմանագիրն արդեն լուծվել է):

8.12. Բաժանորդային Պայմանագրի համաձայն տրամադրված Սարքի կորստի, հափշտակության կամ ցանկացած այլ պատճառներով (ոչ Յուքոմի գործողությունների հետևանքով) վնասման դեպքում նոր Սարքի տրամադրումը հնարավոր է Բաժանորդի կողմից Սարքի դիմաց Յուքոմին փոխհատուցելուց հետո, բայց ոչ ուշ քան Յուքոմի կողմից նման պահանջ Ձեզ ներկայացնելու պահից 10 (տասը) օրվա ընթացքում:

8.13. Յուքոմն իրավասու է՝

8.13.1. պահանջել վճար Ծառայությունների պատշաճ մատուցմանը խոչընդոտող անսարքությունները և թերությունները շտկելու (այդ թվում՝ փոխված մալուխների, սարքավորումների) համար, եթե դրանք առաջացել են Բաժանորդի գործողությունների և/կամ անգործության պատճառով,

8.13.2. հավելյալ (լրացուցիչ) ծառայություններ մատուցելու համար Բաժանորդից գանձել վճար,

8.13.3. Յուքոմի Ցանցին միացնելու նպատակով Բաժանորդի Տարածքում մալուխների մոնտաժման աշխատանքներ կատարելու համար Բաժանորդից պահանջելու միացման վճար (եթե, օրինակ՝ Յուքոմի մասնագետների կողմից օգտագործված մալուխների (նյութերի) քանակը և կատարված աշխատանքների ծավալը գերազանցում են Յուքոմի կողմից սահմանված նորմերը), եթե դա նախօրոք համաձայնեցվել է Բաժանորդի հետ:

8.14. Յուքոմը կարող է սահմանել և հրապարակել մատուցված Ծառայությունների արժեքների հաշվարկի և գանձում իրականացնելու այլ կարգ ու պայմաններ:

9. Վճարման կարգ և վճարումներ

9.1. Ծառայությունների համար վճարումները որպես կանոն (եթե այլ բան սահմանված չէ Բաժանորդային Պայմանագրով) սահմանվում և հաշվարկվում են ամսական կտրվածքով:

9.2. Ծառայության համար (ըստ բաժանորդագրման տեսակի) սահմանվում է կանխավճարային կամ հետվճարային և/կամ (հետվճարային) ամսական բաժանորդագրության վճարմամբ համակարգ:

9.3. Ծառայության համար վճարումը մասամբ կամ ամբողջությամբ ուշացնելու, չկատարելու կամ Յուքոմի նկատմամբ այլ չկատարված ֆինանսական պարտավորությունների դեպքում Յուքոմն իրավունք ունի նվազեցնելու/գանձելու պարտքի գումարը Բաժանորդի գրավադրված դրամական միջոցներից կամ բանկային երաշխիքից և/կամ կանխավճարի գումարից և/կամ բոնուսգանձում տարածելու գրավի առարկայի վրա:

9.4. Բաժանորդագրման վճարի չափը կարող է լինել հաստատված կայուն գումար կամ կախված լինել Բաժանորդի Հաշվի ներքո Ծառայությունների, ակտիվացված գծերի կամ Համարների քանակից:

9.5. Ըստ Առաջարկի նկարագրի և Սակագնային Պլանի՝ բաժանորդագրման վճարը կարող է նվազեցվել կամ չնվազեցվել օգտագործված Ծառայությունների դիմաց:

9.6. Բաժանորդագրման վճարը (ամսավճարը) ենթակա է հաշվարկման և գանձման Ծառայության ակտիվացման պահից մինչև Ծառայության ամբողջական կասեցումը, եթե այլ բան չի սահմանվում Յուքոմի կողմից:

9.7. Դուք պարտավոր եք բաժանորդագրման վճարը վճարել նաև այն դեպքում, երբ որևէ պատճառով Ծառայությունից չեք օգտվել(եթե սահմանված կարգով չեք լուծել Բաժանորդային Պայմանագիրը):

9.8. Ըստ Ծառայության Առաջարկի և Սակագնային Պլանի՝ Բիլինգի Օրը կարող է լինել յուրաքանչյուր ամսվա վերջին օրը, Յուքոմի կողմից սահմանված այլ օր կամ յուրաքանչյուր Բաժանորդի համար Ծառայության ակտիվացման ամսաթվին համապատասխանող յուրաքանչյուր ամսվա նույն օրը: Վերջին դեպքում, երբ Ծառայությունների ակտիվացումն իրականացվում է ամսվա 29-ից 31-ն ընկած ժամանակահատվածում, Բիլինգի Օր է համարվում յուրաքանչյուր ամսվա 28-ը:

9.9. Յուքոմն իրավասու է իր բացառիկ հայեցողությամբ սահմանել Ծառայություններից օգտվելու գումարային սահմանաչափ (առավելագույն բացասական Հաշվեկշիռը, որի սահմաններում Դուք կարող եք օգտվել Ծառայություններից) և օգտագործման վերաբերյալ այլ սահմանափակումներ:

9.10. Գումարային սահմանաչափը, ըստ ընտրված Սակագնային Պլանի, Ծառայությունների ցանկի և ծավալի, սահմանվում և փոփոխվում է Յուքոմի հայեցողությամբ՝ հաշվի առնելով վճարումներ կատարելու Ձեր պատմությունը, Ձեր վարկային պատմությունը, վճարունակությունը, Ձեր գործունեության ծավալները և շրջանառությունը, հուսալիությունը և նմանատիպ այլ հանգամանքներ:

9.11. Ամսվա ընթացքում գումարային սահմանաչափին հասնելու դեպքում Դուք կարող եք շարունակել օգտվել Յուքոմի Ծառայություններից՝ առկա պարտքը ամբողջությամբ վճարելու, ինչպես նաև լրացուցիչ լիցքավորում կատարելու դեպքում:

9.12. Բիլինգային Համակարգի խափանումների և Պահպանման աշխատանքների իրականացման ընթացքում Բաժանորդների օգտագործած Ծառայությունների դիմաց գանձումները, այդ թվում՝ ռոումինգում գտնվելիս, Բիլինգային Համակարգի կողմից չեն գրանցվում իրական ռեժիմում և ամսական ու հետվճարային բաժանորդագրությամբ համակարգի Բաժանորդները կարող են գերազանցել իրենց գումարային սահմանաչափը, իսկ կանխավճարային համակարգի Բաժանորդները՝ կարող են ծախսել ավելին, քան իրենց փաստացի Հաշվեկշիռը: Նման դեպքերում Հաշիվը ստուգելիս Բաժանորդները չեն կարող տեսնել Հաշվեկշռի վերջին թարմացումները, ինչը հիմք չէ օգտագործած Ծառայությունների դիմաց հաշվարկված գումարը չվճարելու համար:

9.13. Կանխավճարային համակարգ.

9.13.1. Դուք իրավունք ունեք օգտվել Ծառայություններից Ձեր Հաշվեկշռի և Յուքոմի կողմից սահմանված ժամկետի սահմաններում: Մատուցված Ծառայությունների դիմաց գանձումներն ուղղակիորեն նվազեցվում են Ձեր Հաշվեկշռից:

9.14. Ամսական բաժանորդագրությամբ համակարգ.

9.14.1. Ամսական բաժանորդագրությամբ համակարգի դեպքում սահմանվում է ամսական բաժանորդագրության վճար (ամսավճար), որը պետք է վճարվի Բաժանորդի կողմից յուրաքանչյուր ամիս՝ անկախ այն հանգամանքից, Բաժանորդը տվյալ ամիս օգտվել է Ծառայություն(-ներ)ից, թե ոչ:

9.14.2. Ամսական բաժանորդագրությամբ համակարգի դեպքում կարող է նախատեսվել Ծառայություններին բաժանորդագրման ժամանակ վճարվող կանխավճար, որը կարող է նվազեցվել հաջորդող ամսվա համար վճարման ենթակա գումարից կամ չնվազեցվել:

9.14.3. Եթե Դուք արդեն ունեք առնվազն 1 (մեկ) ամսվա չվճարված պարտք, ապա Ձեզ մատուցվող Ծառայությունը կրկին ակտիվացնելու և Ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ կլինի ամբողջությամբ վճարել անցած ամսվա (ամիսների) չվճարված պարտքը և ընթացիկ ամսվա ամսավճարը, եթե այլ բան սահմանված չէ Յուքոմի կողմից:

9.14.4. Վճարովի Ծառայություններ ակտիվացնելու դեպքում գանձումը կատարվում է ամսավճարի հետ միասին և նույն կանոններով կամ Ձեր կողմից կատարված կանխավճարից, եթե այլ բան սահմանված չէ Յուքոմի կողմից:

9.14.5. Ամսական բաժանորդագրությամբ համակարգի դեպքում վճարումը կատարվում է ամսական՝ Բիլինգի Օրվանից հաշվարկված այն ժամանակահատվածի ընթացքում կամ այն օրը, որը սահմանված է Ձեր Բաժանորդային Պայմանագրում կամ Ձեզ ներկայացվող հաշվում: Ընդ որում՝ յուրաքանչյուր ամիս վճարվում է տվյալ ամսվա ամսավճարը և նախորդ ամսվա բացասական Հաշվեկշիռը, եթե առկա է:

9.15. Հետվճարային ամսական և հետվճարային բաժանորդագրությամբ համակարգ.

9.15.1. Հետվճարային ամսական և հետվճարային բաժանորդագրությամբ համակարգի դեպքում Դուք վճարումը կատարում եք հաշվետու ամսվա ընթացքում Ծառայությունները ստանալուց հետո՝ ըստ Առաջարկում և/կամ Սակագնային Պլանում նշված կարգի և/կամ ըստ օգտագործված Ծառայությունների քանակի:

9.15.2. Հետվճարային ամսական և հետվճարային բաժանորդագրությամբ համակարգի դեպքում Դուք պարտավոր եք վճարումները կատարել Ձեր Բաժանորդային Պայմանագրում կամ Ձեզ ներկայացվող հաշվում սահմանված ժամկետում: Ընդ որում՝ յուրաքանչյուր ամիս վճարվում է նախորդ ամսվա ամսավճարը, եթե այն նախատեսված է, և նախորդ ամսվա բացասական Հաշվեկշիռը:

9.15.3. Կորպորատիվ Բաժանորդները Յուքոմի առջև պատասխանատվություն են կրում իրենց աշխատակիցների համար այն դեպքում, երբ այդ աշխատակիցներն օգտվում են Ծառայություններից Բաժանորդի կորպորատիվ Սակագնային Պլանի/Փաթեթի ներքո, եթե այլ բան չկա սահմանված Յուքոմի կողմից:

9.16. Ձեր կողմից Յուքոմի սահմանած գումարային սահմանաչափին հասնելու դեպքում Յուքոմն իրավասու է սահմանափակել կամ կասեցնել Ծառայությունների մատուցումը և/կամ արտահերթ հաշիվ ներկայացնել փաստացի մատուցված Ծառայությունների համար, որը պետք է վճարվի հաշվում նշված ժամկետում:

9.17. Ըստ Ծառայության առաջարկի և տեսակի՝ Դուք կարող եք վճարումն իրականացնել կանխիկ դրամով, վերալիցքավորման քարտի, բանկային փոխանցման, տերմինալների, բանկային վճարային քարտերի, առցանց և/կամ Յուքոմի կողմից ընդունելի այլ միջոցներով:

9.18. Եթե Ձեր և Յուքոմի միջև կնքվել են մի քանի Բաժանորդային Պայմանագրեր կամ նույն Բաժանորդային Պայմանագրով տրամադրվել են մի քանի Հաշիվներ կամ Համարներ, Յուքոմն իրավունք ունի հաշվանցելու կամ ուղարկելու մեկ Բաժանորդային Պայմանագրի, Հաշվի կամ Համարի համար ստացված և չօգտագործված դրամական միջոցները Ձեր մեկ այլ Բաժանորդային Պայմանագրով, Հաշվով կամ Համարով գոյացած պարտքը մարելու համար, որի ժամանակ Բաժանորդի Հաշվին պահպանվում է այն գումարը, որը մնացել է պարտքերի ամբողջական մարումից հետո:

9.19. Բացառությամբ կանխավճարային համակարգի, մնացած վճարային համակարգերի դեպքերում յուրաքանչյուր ամսվա Ձեր հաշիվը պատրաստվում և փոխանցվում է Յուքոմի Վաճառքի և սպասարկման կենտրոններ՝ Բիլինգի Օրվանից 10 (տասը) օրվա ընթացքում, եթե այլ բան չի սահմանվում Յուքոմի կողմից:

9.20. Ձեր ընտրությամբ հաշիվը կարող է ուղարկվել էլեկտրոնային փոստով կամ փոստային առաքման ծառայության միջոցով: Յուքոմն իրավունք ունի փոստային առաքումների, ինչպես նաև Ձեր հաշվի կրկնօրինակը տրամադրելու համար Ձեզնից գանձելու վճար:

9.21. Յուքոմի կողմից ներկայացված հաշիվը (Հաշվից քաղվածքը) դիտարկվում է որպես մատուցված Ծառայությունների և դրանց ծավալի ապացույց:

9.22. Ցանկացած դեպքում Դուք պարտավոր եք անձամբ ճշտել Ձեր ամսական պարտքը և պատասխանատվություն եք կրում այն ժամանակին վճարելու համար՝ անկախ վճարման միջոցից, հաշիվը ստանալու կամ ներկայացված հաշվի վերաբերյալ որևէ առարկություն ունենալու փաստից: Հաշվի չստանալը կամ ուշացումով ստանալը չի կարող հիմք հանդիսանալ վճարումները չկատարելու համար:

9.23. Դուք կարող եք վիճարկել կամ առարկություններ ներկայացնել Յուքոմի կողմից Ձեզ ներկայացված հաշվի վերաբերյալ մինչև տվյալ հաշվի համար սահմանված վճարման վերջնաժամկետը, հակառակ դեպքում ներկայացված հաշվում նշված (հաշվարկված) պարտքը (հաշվարկված վճարը) համարվում է Ձեր կողմից անվերապահորեն ընդունված:

9.24. Հաշվի չվճարումը չի համարվում առարկության ներկայացում դրա վերաբերյալ:

9.25. Հաշվի վերաբերյալ Ձեր առարկությունները կարող են ներկայացվել գրավոր կամ էլեկտրոնային նամակի կամ Զանգերի սպասարկման կենտրոն հեռախոսազանգի միջոցով:

9.26. Ամրակցված ցանցով մատուցվող Ծառայությունների դիմաց Բաժանորդը պետք է վճարի ամեն ամիս, եթե այլ բան սահմանված չէ Սակագնային Պլանի/Փաթեթի նկարագրությամբ՝ մինչև Ծառայությունների մատուցմանը հաջորդող ամսվա 15-րդ օրը ներառյալ, իսկ Շարժական կապի Ծառայությունների դիմաց՝ մինչև հաջորդ ամսվա 20-ը ներառյալ:

9.27. Վճարումը համարվում է կատարված Յուքոմի Բիլինգային Համակարգ վճարումը մուտքագրելու պահից:

9.28. Սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում Յուքոմն իրավունք ունի հաշվարկելու տույժ հաշվում նշված վճարման վերջնաժամկետին հաջորդող 12-րդ օրվանից սկսած յուրաքանչյուր օրվա համար՝ վճարման ենթակա գումարի 0.1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շրջանակներում, եթե այլ բան սահմանված չէ Յուքոմի կողմից:

9.29. Վճարում կատարելիս Դուք պետք է ճշգրիտ նշեք այն Համարը և/կամ Հաշվի համարը և/կամ Դիմումի համարը (ID), որի համար կատարվում է վճարումը:

9.30. Բաժանորդի փոխարեն վճարում կատարող ցանկացած անձ, վճարումներ կատարելու մասով, համարվում է Բաժանորդի կողմից պատշաճ կերպով լիազորված և վերջինիս անունից գործող:

9.31. Սույնով Դուք անվերապահորեն տալիս եք Ձեր համաձայնությունը Յուքոմի կողմից ուղղումներ կատարելու սխալ վճարումներում, ներառյալ՝ իրականացնել սխալ վճարման փոխանցում Ձեր Հաշվից ճիշտ հասցեատիրոջը:

9.32. Ձեր կողմից սխալ Հաշվին կատարված ցանկացած վճարում ենթակա է Յուքոմի կողմից ուղղման ողջամիտ հնարավորությունների շրջանակում, և Յուքոմը պատասխանատվություն չի կրում Ձեր կրած վնասների համար:

9.33. Եթե Բաժանորդը կամ երրորդ անձը Բաժանորդի Հաշվին սխալ (ավել) գումար է փոխանցել, ապա այդ գումարը հետ ստանալու համար վերջինս պետք է դիմի այն բանկին կամ վճարահաշվարկային կազմակերպությանը, որի միջոցով կատարել է փոխանցումը:

9.34. Ամսական և հետվճարային բաժանորդագրությամբ համակարգերի դեպքերում արտերկրից Բաժանորդի Հաշվին վճարում կատարվելու (նաև սխալ փոխանցված գումարի) դեպքում Բաժանորդային Պայմանագրի լուծման կամ այլ դեպքերում Յուքոմն իրավունք ունի Բաժանորդին կամ գումարը փոխանցած անձին չվերադարձնելու Բաժանորդի Հաշվին առկա գումարն ամբողջությամբ կամ արտերկրից ստացված վճարումների ողջ գումարի չափով, եթե Յուքոմն այդ փոխանցման մեջ գտնի օրենսդրությամբ արգելված գործողություն:

9.35. Դուք սույնով համաձայն եք, որ Ձեր կողմից Յուքոմի հաշիվները պատշաճ չվճարվելու հետևանքով, այդպիսի ուշ վճարումները դատական կարգով հավաքագրման նպատակով Յուքոմի կողմից դիմում ներկայացվելու դեպքում, Յուքոմն իրավունք է ձեռքբերում միաժամանակ իր հայեցողությամբ ստորև ներկայացված բանաձևով Ձեր նկատմամբ հաշվարկելու տուգանք, որը Դուք պարտավոր եք վճարել Յուքոմի առաջին իսկ պահանջով՝

$S = Պ_մ \times S_Բ + Պ_մ \times S_Բ \times Գ_ու$

Որտեղ՝

S – սույն կետին համապատասխան հաշվարկված տուգանքի տոկոսադրույքն է

$Պ_մ$ – Ձեր պարտքի հիմնական (մայր) գումարն է,

$S_Բ$ – սույն կետով նախատեսված տուգանքի բազային տոկոսադրույքն է, որը կազմում է 21%

$Գ_ու$ – ուղղիչ գործակիցն է, որն իրենից ներկայացնում է՝ սույն կետով նախատեսվածից բացի՝ Ձեր նկատմամբ հաշվարկված մյուս բոլոր տույժերի ու տուգանքների հանրագումարի (բաժանելի) և Ձեր պարտքի հիմնական (մայր) գումարի (բաժանարար) քանորդը,

9.36. Բաժանորդագրվելով Յուքոմի ծառայություններին Դուք ընդունում և համաձայնում եք, որ.

9.36.1. Յուքոմն իրավասու է իր կողմից սահմանված կարգով առանց Ձեզ որևէ ծանուցման զրոյացնել Ձեր Հաշվեկշիռը՝ Ձեր կողմից այն սահմանված ժամկետում չսպառելու դեպքում:

9.36.2. Ձեր Հաշվին առկա գումարը (դրական հաշվեկշիռը) Դուք չեք կարող կանխիկացնել:

9.36.3. Բաժանորդային Պայմանագիրը լուծելու դեպքում (եթե նույն Բաժանորդի անունով այլ գործող պայմանագիր առկա չէ) Ձեր հաշվին առկա դրական մնացորդը Ձեզ է վերադարձվում մեկ ամսվա ընթացքում, եթե լուծման պահին ներկայացրել եք Յուքոմի կողմից սահմանված ձևանմուշով դիմում:

10. Կասեցում, սահմանափակում

10.1. Յուքոմն իրավունք ունի, նախապես Ձեզ տեղեկացնելով (10.1.1-րդ ,10.1.2-րդ, 10.1.4-րդ և 10.1.7-րդ կետերում նշված դեպքերում՝ առանց տեղեկացման), սահմանափակելու կամ կասեցնելու Ձեզ մատուցվող Ծառայություն(-ներ)ը, եթե՝

10.1.1. Դուք օգտագործում եք չսերտիֆիկացված սարքավորում

10.1.2. Դուք հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցին միացրել եք այնպիսի սարքավորումներ, որոնք համատեղելի չեն կամ միջամտում են հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի աշխատանքին կամ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններից օգտվելու ուրիշների հնարավորությանը,

10.1.3. Ձեր կողմից թույլ է տրվել Բաժանորդային Պայմանագրի որևէ պայմանի խախտում,

10.1.4. Դուք անպատշաճ կամ անօրինական եք օգտագործել Ծառայությունները,

10.1.5. Դուք ժամանակին կամ ամբողջությամբ չեք կատարել մատուցված Ծառայությունների դիմաց վճարում կամ Հաշվի լիցքավորում, ներառյալ կիրառվող տույժերը, տուգանքները և Բաժանորդային Պայմանագրով սահմանված այլ գումարները,

10.1.6. Ծառայություններին բաժանորդագրվելիս Դուք ոչ ճիշտ կամ ոչ ամբողջական տեղեկություն կամ փաստաթղթեր եք ներկայացրել, կամ այլ կերպ բաժանորդագրման պայմանները չեն բավարարվել,

10.1.7. Յուքոմի կողմից հայտնաբերվել է կասկածելի բնույթի Տրաֆիկ (վիրուսային ծրագրերի կամ սպամի տարածման փորձի փաստեր կամ դրա վերաբերյալ հիմնավոր կասկածներ և այլն),

10.1.8. Պահպանման Աշխատանքների իրականացման համար,

10.1.9. Եթե Ծառայությունների մատուցումը խախտում է (կարող է խախտել) երրորդ անձանց իրավունքները:

10.2. Սույն Պայմանների 10.1.1.-րդ, 10.1.2.-րդ, 10.1.4.-րդ և 10.1.7-րդ կետերում նախատեսված դեպքերում Յուքոմն իրավունք ունի սահմանափակելու կամ կասեցնելու Ձեզ մատուցվող Ծառայություն(-ներ)ն առանց այդ մասին Ձեզ նախապես տեղեկացնելու:

10.3. Ծառայության սահմանափակման ընթացքում Յուքոմն իրավունք ունի՝

10.3.1. Մասնակի կամ ամբողջությամբ ապաակտիվացնելու Ծառայությունը (օրինակ՝ մուտքային և ելքային զանգեր),

10.3.2. Ապամոնտաժելու իր մալուխներն ու Սարքերը:

10.4. Կասեցման կամ սահմանափակման կարգն ու ժամկետները կարող են պայմանավորված լինել Առաջարկի Նկարագրով և Սակագնային Պլանով:

10.5. Կասեցման կամ սահմանափակման հիմքերը վերանալուց կամ ժամկետը լրանալուց հետո իրականացվում է վերաակտիվացվում՝ առանց Ձեզ նախապես ծանուցելու:

10.6. Կասեցման կամ սահմանափակման դեպքում վերաակտիվացում կարող է կատարվել Յուքոմի նկատմամբ ունեցած բոլոր պարտքերը, տույժերը, տուգանքները և Բաժանորդային Պայմանագրով սահմանված այլ գումարները, ինչպես նաև այդ վճարումները հավաքագրելու հետ կապված Յուքոմի կողմից կրած բոլոր ծախսերը Ձեր կողմից վճարելու դեպքում, եթե այլ բան չի սահմանվում Յուքոմի կողմից:

10.7. Ծառայության սահմանափակումը Ձեզ չի ազատում ամսական սպասարկման վճարը և կուտակված այլ պարտքերը վճարելու պարտականությունից:

10.8. Կասեցման կամ սահմանափակման ամբողջ ընթացքում Ձեր չկատարած պարտավորությունները Ձեր կողմից ենթակա են կատարման՝ Բաժանորդային Պայմանագրով սահմանված կարգով:

10.9. Եթե Դուք հանդիսանում եք մեկից ավելի Հաշվի կամ Ծառայության օգտագործող, և եթե Դուք Յուքոմի նկատմամբ ունեք պարտք Ձեզ պատկանող որևէ Հաշվի կամ Ծառայության հետ կապված, Յուքոմն իրավունք ունի կասեցնելու կամ սահմանափակելու Ձեզ մատուցվող բոլոր Ծառայությունները (Համարները) և Ձեզ տրամադրված բոլոր Հաշիվները մինչև պարտքի ամբողջական մարումը:

10.10. Կասեցման և/կամ սահմանափակման ժամանակ, որոշ Ծառայությունների, որոնք Դուք չեք ցանկանում կասեցնել, այդ թվում՝ Ձեզ համար հատկացված գերարագ ինտերնետի ծավալի պահպանման համար Յուքոմի կողմից կարող են պահանջվել վճարներ՝ ըստ Առաջարկի Նկարագրի և Սակագնային Պլանի:

10.11. Անվտանգության նկատառումներից ելնելով՝ Յուքոմն իրավասու է սահմանափակել կամ կասեցնել Ծառայության մատուցումը՝ այդ մասին Ձեզ նախապես տեղեկացնելով, կամ խնդրել ժամանակավորապես դադարեցնել Ծառայությունից օգտվելը, որը չկատարելը կարող է պատասխանատվություն առաջացնել Ձեզ համար:

10.12. Դուք իրավունք ունեք մեկ օրացուցային տարվա մեջ մեկ անգամ անվճար կարգով կասեցնել Ամրակցված Ցանցով մատուցվող Ծառայությունները նվազագույնը տասնօրյա, իսկ առավելագույնը՝ երկամսյա ժամկետով՝ Յուքոմ ներկայացնելով համապատասխան դիմում և վճարելով մինչ այդ օրը Ձեզ մատուցված Ծառայությունների դիմաց:

10.13. Եթե Դուք ցանկանում եք ժամանակավոր կասեցնել Ձեզ մատուցվող Ծառայություններն ավելի քան երկամսյա ժամկետով, ապա համապատասխան դիմումը ներկայացնելուց հետո պարտավոր եք առկա պարտքն ամբողջությամբ մարել և/կամ Յուքոմին վերադարձնել Սարքը և վճարել Յուքոմի կողմից սահմանված վճարը:

10.14. Այն դեպքում, երբ Դուք կնքել եք որոշակի ժամկետում Յուքոմի Բաժանորդ մնալու պարտավորությամբ Բաժանորդային Պայմանագիր (Համաձայնագիր)՝ Ձեր հայեցողությամբ Ծառայության կասեցման դեպքում կասեցման ժամանակահատվածը չի ներառվում վերոնշյալ ժամկետի հաշվարկի մեջ և Բաժանորդ մնալու Ձեր պարտավորության ժամկետը երկարաձգվում է կասեցման ժամանակահատվածին համապատասխան:

10.15. Ծառայությունների Կասեցման/սահմանափակման ժամանակ Ձեր Հաշվին առկա դրական Հաշվեկշիռը, բոնուսները, ավտոմատ գեներացված առաջարկները և այլ արտոնությունները կարող են զրոյացվել՝ ըստ Ծառայության առաջարկի և Սակագնային Պլանի/Փաթեթի:

10.16. Յուքոմն է սահմանում Ծառայությունների (Բաժանորդի նախաձեռնությամբ իրականացվող) կասեցումների քանակը և տևողությունը:

11. Պատասխանատվություն

11.1. Բաժանորդը երաշխավորում է, որ ունի համապատասխան իրավասություն, Տարածքում Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ մալուխների մոնտաժման և Սարքերի տեղադրման աշխատանքները թույլատրելու համար: Բաժանորդը պետք է տասնօրյա ժամկետում Յուքոմին հատուցի սույն կետում նշվածի առնչությամբ երրորդ անձանց կողմից ներկայացված բոլոր պահանջներով Յուքոմի կրած ողջ վնասը:

11.2. Բաժանորդն ընդունում է, որ Յուքոմն իրավասու է երրորդ անձանց կողմից սույն Պայմանների 11.2 կետում նշվածի առնչությամբ Յուքոմին ներկայացված հիմնավոր պահանջ(-ներ)ի դեպքում միակողմանի կարգով լուծել (Տարածքում Ամրակցված ցանցով Ծառայություններ մատուցելու վերաբերյալ) Բաժանորդային Պայմանագիրը, ընդ որում, որոշակի ժամկետով բաժանորդ մնալու պարտավորությամբ Բաժանորդային Պայմանագր(-եր)ի լուծման դեպքում Բաժանորդն է կրում համապատասխան պարտավորության ռիսկը:

11.3. Օրենքի թույլատրելի սահմաններում Յուքոմը և Դուք սույնով հրաժարվում եք Բաժանորդային Պայմանագրի համաձայն մատուցվող Ծառայությունների հետ կապված միմյանց անուղղակի վնասների և բաց թողնված օգուտների հատուցման պահանջներ ներկայացնելուց:

11.4. Յուքոմի պատասխանատվությունը յուրաքանչյուր Բաժանորդի մասով չի կարող գերազանցել Ծառայությունների դիմաց տվյալ ամսվա համար հաշվարկվող (գանձվող) ամսական գումարի և Յուքոմի մեղքով Ծառայություններից օգտվելու անհնարինության ժամկետին համարժեք գումարի տարբերությունը:

11.5. Յուքոմը որևէ պատասխանատվություն չի կրում՝

11.5.1. Ծառայությունները չմատուցելու կամ ոչ պատշաճ մատուցելու համար, եթե դա Պահպանման Աշխատանքների և/կամ սույն Պայմանների 5.12. կետում սահմանված հանգամանքների և գործոնների և/կամ նմանատիպ այլ իրադարձությունների հետևանք է,

11.5.2. Յուքոմից ձեռք բերված սարքավորման կամ SIM-քարտի միջոցով Ձեզ պատճառված վնասի համար, ինչպես նաև Ձեր և այլ անձանց կողմից սարքավորմանը կամ SIM-քարտին պատճառված վնասի համար,

11.5.3. եթե Դուք ոչ պատշաճ կամ անօրինական կերպով եք օգտվում Ծառայություններից,

11.5.4. այլ օպերատորների և անձանց կողմից մատուցվող ծառայությունների և երրորդ անձանց կողմից կամ նրանց միջոցով Յուքոմի Ցանցի կամ այլ տեխնիկական միջոցների օգտագործմամբ Բաժանորդին մատուցվող Ծառայությունների որակի համար և չի տրամադրում որևէ երաշխիք այդ կապակցությամբ, այդ թվում՝ դրանց առնչությամբ ներկայացված հաշիվների համար: Անհրաժեշտության դեպքում նման ծառայությունները Բաժանորդին հասանելի դարձնելու համար երրորդ անձանց հետ հարաբերություններում Յուքոմը կարող է հանդիսանալ Բաժանորդի գործակալ՝ գործելով իր անունից և Բաժանորդի հաշվին,

11.5.5. իր գործընկերների (այդ թվում՝ օտարերկրյա) կամ գործակալների միջոցով փոխանցվող ազդանշանների կամ մատուցվող Ծառայությունների խափանման կամ դադարեցման հետևանքով առաջացած ընդհատումների, անջատումների, խափանումների կամ որոշակի տեսակի Ծառայությունների մեջ կատարված փոփոխությունների համար,

11.5.6. իր Ցանցի միջոցով հեռարձակվող (վերահեռարձակվող) Հեռուստաալիքների հեռուստառադիոծրագրերի բովանդակության, դրանց փոփոխության կամ դադարեցման, Հեռուստաալիքների տեխնիկական կարգաբերումների փոփոխությունների համար, ինչպես նաև Ծառայություններում ներառված հեռուստաալիքների կազմի փոփոխության համար,

11.5.7. վճարումներն ընդունող միջնորդ կազմակերպության, բանկի կողմից սահմանված կանոնների համաձայն որևէ լրացուցիչ միջնորդավճարի գանձման համար:

11.6. Դուք եք պատասխանատվություն կրում.

11.6.1. սույն Պայմանների խախտմամբ Ծառայություններն օգտագործելու դեպքում Յուքոմին կամ երրորդ անձանց կամ նրանց գույքին պատճառված վնասի համար,

11.6.2. Սարքի, դրա պատկանելիքների, մալուխների և այլ պարագաների պահպանման համար և դրանց փչացման, սխալ օգտագործման, կորստի, վնասվածքի կամ հափշտակության դեպքում պարտավոր եք Յուքոմին փոխհատուցել դրանց դիմաց Յուքոմի կողմից սահմանված կարգով,

11.6.3. Յուքոմի կողմից Ծառայություններին տրամադրված հասանելիության միջոցով Ձեր կողմից կատարվող գործարքների (էլեկտրոնային վճարումներ, գնումներ և այլն), էլեկտրոնային խաղերի և այլ շահումով խաղերի մասնակցության, դրանց հետևանքների համար և կրում եք բոլոր ռիսկերը,

11.6.4. Ձեր կողմից Յուքոմին տրամադրված կապի միջոցներին ուղարկված որևէ տեղեկության, այդ թվում՝ Ձեր անձնական տվյալները, նույն կապի միջոցներին հասանելիություն ունեցող անձանց հայտնի դառնալու և դրա հետևանքների համար,

11.6.5. այն Տարածքում, որտեղ պետք է մատուցվեն Ծառայությունները, մալուխների մոնտաժման և Սարքերի տեղադրման համար անհրաժեշտ թույլտվություններ ստանալու համար,

11.6.6. Բաժանորդային Պայմանագրի կնքումից հետո Պայմանների, Բաժանորդային Պայմանագրի, Ցանցի Ծածկույթի/Հասանելիության Տարածքի, Ծառայությունների ցանկի, գների և Կանոնների/Կարգերի փոփոխություններին ծանոթանալու համար,

11.6.7. Պայմանների 9.11. կետում նշված դեպքերում օգտագործված Ծառայությունների դիմաց առաջացած բոլոր պարտքերի վճարման համար, այդ թվում՝ գումարային սահմանաչափը կամ փաստացի Հաշվեկշիռը գերազանցելու հետևանքով գոյացած պարտքի վճարման համար:

11.7. Մինչև որևէ խնդրի մասին Յուքոմին տեղեկացնելը Դուք պարտավոր եք ստուգեզ Ձեր սարքավորումները և համոզվել, որ պատճառը Ձեր սարքավորումը չէ և Ձեր վերահսկողությունից դուրս է:

11.8. Եթե խնդրի պատճառը Յուքոմի Ցանցն է կամ գտնվում է Յուքոմի վերահսկողության ներքո, Դուք պարտավոր եք անմիջապես տեղեկացնել Յուքոմին, որպեսզի վերջինս ձեռնարկի համապատասխան միջոցառումներ: Այդ մասին Յուքոմին ուշ տեղեկացնելու դեպքում Յուքոմը պատասխանատվություն չի կրում տեղեկացնելուն նախորդող ժամանակահատվածի համար:

11.9. Դուք զրկվում եք մատուցվող Ծառայության կամ դրա որակի հետ կապված որևէ պահանջ ներկայացնելու իրավունքից, եթե առաջացած խնդիրների մասին սեղմ ժամկետում չեք տեղեկացնում Յուքոմին, որի հետևանքով բաց է թողնվում Ծառայության որակի հետ կապված խնդիրների առկայության փաստը հաստատելու և պատճառները պարզաբանելու տեխնիկական հնարավորությունը:

11.10. Դուք եք պատասխանատվություն կրում երրորդ անձանց կողմից Ձեր Սարքի, SIM-քարտի, Համարի կամ սարքավորման միջոցով Ծառայությունների ցանկացած օգտագործման համար և Դուք եք կրում նման օգտագործման հետևանքով առաջացած բացասական հետևանքները, այդ թվում՝ պարտքերի մարման պարտավորությունը: SIM-քարտի և Յուքոմի կողմից տրամադրված սարքավորման, Սարքի տիրապետողը կհամարվի դրա լիազորված օգտագործողը, իսկ իրականացված գործողությունները կհամարվեն կատարված Ձեր անունից և ի շահ Ձեզ, և նման օգտագործման հետևանքով առաջացած պարտքերը մարելու պարտավորությունը կկրեք Դուք մինչև Ձեր կողմից SIM-քարտի, Սարքի կամ սարքավորման կորստի կամ հափշտակության մասին Յուքոմին սահմանված կարգով տեղեկացնելը և Ձեր պահանջով Ծառայությունների կասեցումը, որը բավարարվում է Յուքոմի կողմից 24 ժամվա ընթացքում: Յուքոմն իրավասու է մինչև Ձեր պահանջի կատարումը ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները Ձեր անձը ճշտելու համար, սակայն պատասխանատվություն չի կրում չլիազորված անձի կողմից ներկայացվող նմանատիպ պահանջների և դրանց կատարման համար:

11.11. Պայմանների 7.5. կետում սահմանված պարտականությունների խախտումների հայտնաբերման դեպքում Յուքոմի կողմից նման գործողություններ կատարելուց զերծ մնալու վերաբերյալ գրավոր զգուշացում ստանալուց հետո Ձեր կողմից այդ գործողություններից որևէ մեկը կրկին կատարելու կամ խախտումը շարունակելու դեպքում Յուքոմն իր հայեցողությամբ իրավունք ունի սահմանափակելու Ձեզ մատուցվող Ծառայության արագությունը կամ Տրաֆիկը կամ կասեցնելու Ծառայությունը կամ միակողմանի կարգով լուծելու Բաժանորդային Պայմանագիրը, ինչպես նաև պահանջելու Ձեր գործողությունների հետևանքով Յուքոմին պատճառված վնասների հատուցում:

11.12. Կողմերը պատասխանատվություն չեն կրում սույն Պայմաններով ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար, եթե պատճառը անհաղթահարելի ուժի (ֆորս-մաժորի) ազդեցությունն է: Սույնով Դուք համաձայնվում եք, որ Ձեր ֆինանսական դրությունը չի կարող դիտարկվել որպես ֆորս-մաժոր, և Դուք պարտավոր եք ամբողջությամբ վճարել Յուքոմի Ծառայությունների համար:

11.13. Այն դեպքերում, երբ Ծառայությունների պատշաճ մատուցման (խափանումների պատճառները հայտնաբերելու և շտկելու) համար անհրաժեշտ է Յուքոմի համապատասխան մասնագետի այցելությունը Տարածք, ապա Ձեր կողմից նման հնարավորություն չստեղծելու դեպքում, Դուք զրկվում եք Ծառայության մատուցման կամ դրա որակի հետ կապված Յուքոմին որևէ պահանջ ներկայացնելու իրավունքից:

11.14. Սույնով Դուք ընդունում և համաձայնվում եք, որ եթե առանց նախապես Յուքոմի համաձայնությունը ստանալու Դուք (և/կամ Ձեր իմացությամբ կամ ցուցումով գործող երրորդ անձը) Բաժանորդային Պայմանագրով Ձեզ տրամադրված Համարը (անկախ Համարի տեսակից և այն օգտագործելու համար Յուքոմին վճարելու փաստից) և/կամ դրա նկատմամբ Ձեր ունեցած օգտագործման իրավունքն այլ անձի փոխանցելուն (օտարելուն) ուղղված հայտարարություն, գովազդ, հրապարակային առաջարկ եք տարածում (ցանկացած եղանակներով), ապա դա կդիտվի որպես Ձեր կողմից Բաժանորդային Պայմանագրի խախտում, որի պարագայում Յուքոմը կարող է (այդ մասին Ձեզ տեղեկացնելով)՝

11.14.1. ապաակտիվացնել և/կամ հետ վերցնել Ձեզ տրամադրված համապատասխան Համար(-ներ)ը, և/կամ

11.14.2. լուծել տվյալ Համար(-ներ)ը Ձեզ տրամադրելու վերաբերյալ Բաժանորդային Պայմանագիրը, և/կամ

11.14.3. կիրառել Բաժանորդային Պայմանագրով նախատեսված պատասխանատվության այլ միջոցներ:

11.15. Բաժանորդը սույնով ընդունում և համաձայնում է, որ Յուքոմի կողմից սույն Պայմանների, Անձնական տվյալների մշակման քաղաքականության կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Բաժանորդի վերաբերյալ տեղեկությունների (անձնական տվյալների) բացահայտման դեպքում իրավունք չունի Յուքոմից պահանջել որևէ փոխհատուցում:

12. Լուծում

12.1. Յուքոմն իրավունք ունի միակողմանի լուծելու Բաժանորդային Պայմանագիրը՝ առանց այդ մասին Ձեզ նախապես տեղեկացնելու

12.1.1. Դուք խախտել եք Բաժանորդային Պայմանագրի կետերը և/կամ օրենքը,

12.1.2. Ծառայության համար սահմանված վճարումները Բաժանորդային Պայմանագրով նախատեսված ժամկետը լրանալուց 60 (վաթսուն) օրվա ընթացքում չկատարելու դեպքում,

12.1.3. Ծառայությունների կասեցումից հետո սահմանված կարգով և ժամկետներում Ծառայությունների չվերաակտիվացման դեպքում (Ձեր Հաշվին Բաժանորդային Պայմանագրով կամ Սակագնային Պլանով սահմանված ժամկետում դրական Հաշվեկշռի ապահովման համար բավարար դրական մնացորդի բացակայությունը կամ Ծառայության վերաակտիվացման համար Բաժանորդային Պայմանագրով կամ Սակագնային Պլանով սահմանված ժամկետում անհրաժեշտ գործողությունների չկատարումը և այլն),

12.1.4. Բաժանորդային Պայմանագրի կնքման պահից 18 (տասնութ) ամսվա ընթացքում SIM-քարտը չակտիվացնելու դեպքում՝ SIM-քարտին ամրակցված Համարի մասով,

12.1.5. եթե Յուքոմին դիմել է (հեռախոսակապի ծառայության) Համարի փաստացի օգտագործողը և սահմանված Կարգին համապատասխան ներկայացրել հավաստի տվյալներ առ այն, որ վերջին 6 (վեց) ամսում տվյալ Համարը (SIM-քարտը) օգտագործում և տիրապետում է իր կողմից (փաստացի պատկանում է իրեն),

12.1.6. եթե Յուքոմին դիմել է Ամրակցված ցանցով մատուցվող Ծառայության/Ծառայությունների փաստացի օգտագործողը և սահմանված Կարգին համապատասխան ներկայացրել հավաստի տվյալներ առ այն, որ վերջին 6 (վեց) ամիսների ընթացքում տվյալ Տարածքում Ծառայություն(-ներ)ը օգտագործվում է(են) իր կողմից,

12.1.7. Բաժանորդային Պայմանագիրը լուծվում է Յուքոմի լիցենզիաների և/կամ թույլտվությունների դադարեցման դեպք(-եր)ում,

12.1.8. ՀՀ օրենսդրությամբ և Բաժանորդային Պայմանագրով սահմանված այլ դեպքերում:

12.2. Դուք իրավունք ունեք միակողմանի հրաժարվել Բաժանորդային Պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն 7 (յոթ) աշխատանքային օր առաջ կամ Յուքոմի համար ընդունելի այլ ժամկետում գրավոր ծանուցելով Յուքոմին, մարելով Յուքոմի հանդեպ Ձեր ունեցած բոլոր պարտքերը, ինչպես նաև Յուքոմից ստացված Սարքը հանձնման-ընդունման ակտով վերադարձնելով Յուքոմին (եթե այլ բան գրավոր նախատեսված չէ Ձեր և Յուքոմի միջև):

12.3. Յուքոմի Ցանցից այլ ցանց Համարի Տեղափոխելիություն կատարելու դեպքում Յուքոմի հետ կնքված Ձեր Բաժանորդային Պայմանագիրը Համարը տեղափոխվելու պահից համարվում է լուծված (տեղափոխված Համարի մասով):

12.4. Յուքոմի Ցանցից այլ ցանց Համարի տեղափոխումը Ձեզ չի ազատում այդ Համարով օգտագործված Ծառայությունների մասով Յուքոմի հանդեպ ունեցած պարտքի վճարման պարտավորությունից:

12.5. Յուքոմի Ցանցից այլ ցանց Համարի տեղափոխման դեպքում Ձեր Հաշվին առկա դրական Հաշվեկշիռը, բոնուսները ավտոմատ գեներացված առաջարկները և այլ արտոնությունները զրոյացվում են: Ձեր Համարը Յուքոմի Ցանց կրկին տեղափոխելու (վերադառնալու) դեպքում կարող եք Յուքոմի Ծառայություններին բաժանորդագրվել նոր բաժանորդների համար սույն Պայմաններով սահմանված ընդհանուր հիմունքներով:

12.6. Բաժանորդային Պայմանագրի լուծումը, անկախ դրա հիմքերից, չի ազատում Ձեզ մինչև լուծման պահը և դրա հետ կապված Յուքոմի հանդեպ Ձեր ունեցած պարտավորությունների պատշաճ կատարումից, այդ թվում՝ Ձեր պարտքը, բոլոր կիրառելի տույժերը, տուգանքները, հրաժարագինը կամ Բաժանորդային Պայմանագրով սահմանված այլ վճարները:

12.7. Եթե Բաժանորդային Պայմանագրի կնքման պահից 6 (վեց) ամսվա ընթացքում չեն մատուցվում Բաժանորդային Պայմանագրում նշված Ծառայությունները կամ Ծառայությունների մի մասը (անկախ չմատուցման պատճառներից), Բաժանորդային Պայմանագիրը համարվում է լուծված համապատասխանաբար Ծառայությունների կամ դրանց մի մասի մասով:

12.8. Այն դեպքերում, երբ Ամրակցված ցանցով Ծառայություններ մատուցելու համար Բաժանորդային Պայմանագրի կնքումից հետո 3 (երեք) ամսվա ընթացքում Բաժանորդը հնարավորություն չի ընձեռնում Յուքոմի մասնագետներին Տարածքում տեղադրել և կարգաբերել Սարքը և միացնել այն Յուքոմի Ցանցին, Բաժանորդային Պայմանագիրը համարվում է լուծված համապատասխան Ծառայության մասով:

12.9. Այն դեպքում, երբ Բաժանորդը չի ցանկանում ստանալ Բաժանորդային Պայմանագրում նշված որևէ Ծառայություն, սակայն հրաժարվում է այդ մասին համապատասխան դիմում (համաձայնագիր) ստորագրել և շարունակում է օգտվել բաժանորդագրված այլ Ծառայություն(-ներ)ից, Բաժանորդային Պայմանագիրը չմատուցված Ծառայության(-ներ)ի մասով համարվում է փոփոխված (եթե Յուքոմը նման փոփոխությանը դեմ չէ և/կամ այդ փոփոխությունը որևէ անցանկալի հետևանք չի առաջացնում Յուքոմի համար): Այդ փոփոխությունը Բաժանորդային Պայմանագրում փաստաթղթային տարբերակով չամրագրելու հետևանքով առաջացող բոլոր բացասական հետևանքների համար ամբողջությամբ պատասխանատվություն է կրում Բաժանորդը:

12.10. Բաժանորդային Պայմանագրի լուծման համար Դուք պարտավոր եք ներկայանալ Յուքոմի Վաճառքի և սպասարկման կենտրոն և լրացնել Յուքոմի կողմից սահմանված ձևի դիմում, եթե այլ բան սահմանված չէ Յուքոմի կողմից:

12.11. Բաժանորդային Պայմանագրի (բացառությամբ կանխավճարային բաժանորդագրության) լուծման դեպքում Յուքոմի հանդեպ Բաժանորդի ունեցած բոլոր պարտքերը (այդ թվում տույժեր, տուգանքներ և այլն) մարելուց հետո Բաժանորդի Հաշվին առկա դրական Հաշվեկշիռը (մնացորդը) հետ ստանալու համար Բաժանորդը պարտավոր է 1 (մեկ) տարվա ընթացքում Յուքոմի կողմից սահմանված ձևի դիմում ներկայացնել Վաճառքի և սպասարկման կենտրոն: 1 (մեկ) տարին լրանալուց հետո այդ Հաշիվը ենթակա է զրոյացման: Կանխավճարային բաժանորդագրության դեպքում Բաժանորդային Պայմանագրի լուծման դեպքում Ձեր կողմից վճարված կանխավճարը ենթակա չէ վերադարձման:

13. Անվտանգություն

13.1. Յուքոմը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց կողմից ուղարկված սպամի, իրականացված հակերային գործունեության, վիրուսների փոխանցման և դրա արդյունքում Ձեզ պատճառված վնասների

համար: Դուք պարտավոր եք անձամբ պաշտպանել Ձեր վերջնակետային սարքավորումը և համակարգերը վիրուսներից և այլ անձանց անօրինական միջամտությունից և պատասխանատվություն եք կրում նման վիրուսների կամ անօրինական միջամտության հետևանքով Յուքոմին և/կամ այլ անձանց պատճառված վնասի համար, ինչպես նաև կրում եք նման վիրուսների կամ անօրինական միջամտության հետևանքով առաջացած պարտքերի մարման պարտավորությունը:

13.2. Յուքոմը պատասխանատվություն չի կրում Ծառայությունների և Յուքոմի Ցանցի միջոցով ստացված տեղեկության և բովանդակության ճշտության, օրինականության և որակի, այդ թվում՝ զանգերի և հաղորդագրությունների բովանդակության համար, եթե Յուքոմը չէ դրանց բացառիկ իրավատերը: Յուքոմի Ցանցի միջոցով ստացված, փոխանցվող կամ օգտագործվող ցանկացած տեղեկություն, ծառայություն կամ բովանդակություն օգտագործվում է Ձեր ռիսկով և պատասխանատվությամբ, և Դուք եք կրում դրանց հետ կապված մտավոր սեփականության իրավունքների խախտման, ինչպես նաև դրանց անօրինական օգտագործման հետ կապված ռիսկերը:

13.3. Յուքոմն իրավունք ունի Ծառայությունների և/կամ բաժանորդների հեռախոսազանգերի սպասարկման որակի բարձրացման, ինչպես նաև անվտանգության նկատառումներով ձայնագրել Ձեր խոսակցությունները Յուքոմի Բաժանորդների զանգերի սպասարկման կենտրոնի կամ Վաճառքի և սպասարկման կենտրոնների աշխատակիցների հետ: Բաժանորդային Պայմանագրի կնքման պահից Դուք տալիս եք Ձեր համաձայնությունը այդպիսի ձայնագրման վերաբերյալ և ընդունում եք, որ նման ձայնագրություններն ունեն ապացույցի ուժ:

14. Անձնական տվյալների պաշտպանություն

14.1. Բաժանորդային Պայմանագիրը ստորագրելով Դուք տալիս եք համաձայնություն Ձեր անձնական տվյալների մշակումը Յուքոմի Վեբ-կայքում հրապարակված (https://ucom.am/pp/hy) Անձնական տվյալների մշակման քաղաքականության համաձայն իրականացնելու համար:

14.2. Յուքոմը կամ իր գործընկերները, որպես մարքեթինգային կամ առևտրային գործունեության մի մաս, ինչպես նաև պարտքերի հավաքագրման կամ Ձեր նույնականացման տվյալների ճշգրտման և թարմացման համար, գրավոր ձևով, հեռախոսով, SMS/MMS ծառայությունների միջոցով կամ այլ կերպ կարող են կապ հաստատել Ձեզ հետ՝ օգտագործելով Ձեր անձնական տվյալները: Նշվածը ներառում է նաև Յուքոմի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ Ձեզ տեղեկատվական և գովազդային բնույթի հաղորդագրությունների ուղարկումը: Սույնով Դուք թույլատրում եք այս ձևով կապի հաստատումը Ձեզ հետ:

14.3. Դուք պարտավոր եք բաժանորդագրվելիս և Բաժանորդային Պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում ապահովել Յուքոմին տրամադրվող տեղեկատվության ճշգրտությունը և հավաստիությունը և պատասխանատվություն եք կրում դրա համար: Դուք պարտավոր եք Յուքոմին պատշաճ կերպով տեղեկացնել Ձեր վերաբերյալ գրանցված տեղեկություններում (հասցե, բանկային տվյալներ, ֆիրմային անվանում, կազմակերպաիրավական ձև և այլն) տեղի ունեցած փոփոխությունների մասին դրանց իրավական ուժ ստանալու պահից հնարավորինս սեղմ ժամկետներում: Դուք եք կրում այդ փոփոխությունների մասին Յուքոմին չհայտնելու հետ կապված բոլոր հնարավոր ռիսկերը (բացասական հետևանքները):

14.4. Բաժանորդի հեռախոսահամարից Արտակարգ պատահարների արագ արձագանքման (փրկարար) ծառայության (112, 911, 101) կամ Ոստիկանության (102) կամ Շտապ բժշկական օգնության ծառայության (103) համարներին կատարվող կանչերի (հաղորդումների) դեպքում, պետական իրավասու մարմնի (Տվյալների կենտրոնի) կողմից «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի համաձայն և ՀԾԿՀ 03.11.2021թվականի թիվ 386Ն որոշմամբ սահմանված կարգով՝ Յուքոմին ուղարկված հարցման դեպքում, Յուքոմը՝ Բաժանորդի կողմից օգտագործվող ծառայության վայրի վերաբերյալ տեղեկությունները

(Բաժանորդի տեղորոշումը), ինչպես նաև Բաժանորդի անձնական տվյալները (անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, իսկ իրավաբանական անձ հանդիսացող Բաժանորդի դեպքում՝ անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը) փոխանցում է իրավասու մարմնի Տվյալների կենտրոն:

15. Պատշաճ ծանուցում

15.1. Բաժանորդային Պայմանագրի շրջանակներում Ձեր և Յուքոմի կողմից ուղարկված ծանուցումները, այդ թվում՝ հաշիվները և դիմումները, համարվում են պատշաճ, եթե հանձնվել են առձեռն կամ ուղարկվել են էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով՝ Բաժանորդային Պայմանագրում նշված բնակության/հաշվառման/իրավաբանական կամ փաստացի գործունեության հասցեներով և/կամ էլեկտրոնային փոստի հասցեներով և/կամ հեռախոսահամարներին, եթե այլ բան սահմանված չէ Բաժանորդային Պայմանագրով:

Դուք պարտավոր եք Յուքոմին տեղեկացնել Ձեր փաստացի բնակության վայրի հասցեի, էլեկտրոնային փոստի հասցեի և/կամ Բաժանորդային Պայմանագրով սահմանված Ձեր այլ կոնտակտային տվյալների փոփոխության մասին այդպիսի փոփոխության կատարումից հետո ոչ ուշ, քան 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

Եթե Դուք սույն կետով սահմանված կարգով Յուքոմին չեք տեղեկացրել Ձեր փաստացի բնակության վայրի հասցեի, էլեկտրոնային փոստի հասցեի և/կամ Բաժանորդային Պայմանագրով սահմանված Ձեր այլ կոնտակտային տվյալների փոփոխության մասին, ապա Ձեր փաստացի բնակության վայրի հասցեի, էլեկտրոնային փոստի հասցեի և/կամ Բաժանորդային Պայմանագրով սահմանված Ձեր այլ կոնտակտային տվյալների փոփոխությամբ պայմանավորված ծանուցման չստացման բոլոր անբարենպաստ հետևանքները կրում եք Դուք:

15.2. Դուք ընդունում եք և համաձայն եք, որ Ձեր և Յուքոմի միջև վեճերի ծագման դեպքում դատական կարգով (թե՛ հայցային վարույթի կարգով, թե՛ վճարման կարգադրություն արձակելու գործերի վարույթի կարգով), ինչպես նաև արբիտրաժային վարույթի կարգով (եթե առկա է արբիտրաժային համաձայնություն) վեճը լուծելիս՝ Ձեր և դատարանի (ցանկացած դատական ատյանի), ինչպես նաև Արբիտրաժի, Ձեր և Յուքոմի, Յուքոմի ու դատարանի (ցանկացած դատական ատյանի), ինչպես նաև Արբիտրաժի միջև՝ վարույթների հետ կապված բոլոր ծանուցումները ինչպես Ձեզ, այնպես էլ Յուքոմին ուղարկվեն էլեկտրոնային կամ կապի այլ միջոցներով՝ Բաժանորդային Պայմանագրում և/կամ Էլեկտրոնային (թվային) գրիչով ստորագրելու մասին համաձայնագրում և/կամ այլ համաձայնագրերում նշված էլեկտրոնային փոստի հասցե(-ներ)ին և/կամ հեռախոսահամար(-ներ)ին: Սույնով Դուք համաձայն եք, որ սույն կետում նշված եղանակներից ցանկացած մեկով կատարված ծանուցումները համարվում են պատշաճ, և դրանց համար ստացման (ընթերցման) մասին հետադարձ ծանուցման (տեղեկացման) պահանջ չի սահմանվում, բացառությամբ էլեկտրոնային փոստով կատարված ծանուցումների, որոնց դեպքում Դուք համարվում եք պատշաճ ծանուցված այն դեպքում, երբ առկա է ծանուցումն ստանալու մասին էլեկտրոնային հավաստում (եթե նույնիսկ բացակայում է այն կարդալու մասին էլեկտրոնային հավաստումը): Սույն կետի նպատակների համար Յուքոմի էլեկտրոնային փոստի հասցեն է dataran@ucom.am:

16. Տարաձայնությունների կարգավորում

16.1. Սույն Պայմանները և Բաժանորդային Պայմանագիրը կարգավորվում և մեկնաբանվում են ՀՀ գործող օրենսդրության համաձայն:

16.2. Յուքոմի և Ձեր միջև սույն Պայմանների կամ Բաժանորդային Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը (տարաձայնություն) ենթակա են լուծման ՀՀ դատարաններում:

17. Եզրափակիչ դրույթներ

17.1. Սույն Պայմաններն ուժի մեջ են մտնում 2018 թվականի նոյեմբերի 1-ից:

17.2. Սույն Պայմաններն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գործող Սակագնային Փաթեթները/Պլանները, Առաջարկների Նկարագրերը, Ծառայությունների հրապարակված Արժեքները (Գնացուցակը), Կարգերն ու Կանոնները մնում են ուժի մեջ:

17.3. Բաժանորդային Պայմանագիրը գործում է անորոշ ժամկետով, եթե Բաժանորդի և Յուքոմի միջև կնքված Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ:

17.4. Որոշ դեպքերում Բաժանորդային Պայմանագիրը կարող է կնքվել որոշակի ժամկետով Յուքոմի Բաժանորդ մնալու պարտավորությամբ: Այդ ժամկետը լրանալուց հետո Բաժանորդային Պայմանագիրը շարունակում է գործել անորոշ ժամկետով, եթե չի լուծվում Ձեր կամ Յուքոմի կողմից Բաժանորդային Պայմանագրով կամ օրենքով սահմանված կարգով և դեպքերում:

17.5. Բաժանորդային Պայմանագիրը և դրանում կատարվող փոփոխությունները, լրացումները, դրա բաղկացուցիչ մասը կազմող կամ դրան վերաբերող այլ փաստաթղթերը և ծանուցումները կարող են հաստատվել ստորագրությունները և/կամ կնիքները թղթային օրինակների վրա դնելու միջոցով կամ Յուքոմի կողմից սահմանված այլ կարգով:

17.6. Յուքոմն իրավասու է հայտարարել ակցիաներ (խթանիչ առաջարկներ) և/կամ զեղչեր, որոնք հայտարարված ժամանակահատվածում կհանդիսանան Բաժանորդային Պայմանագրի լրացում և դրա բաղկացուցիչ մասը: Դրանց վերաբերյալ տեղեկությունը, այդ թվում՝ դրանք Ձեր կողմից ընդունելու կարգը, հրապարակվում է Վեբ-կայքում և/կամ հասանելի դարձվում Վաճառքի և սպասարկման կենտրոններում (կամ տարածվում են Յուքոմի կողմից նախընտրած այլ ձևերով):

17.7. Յուքոմն իրավունք ունի ցանկացած ժամանակ Բաժանորդային Պայմանագրում, այդ թվում՝ սույն Պայմաններում, կատարելու (միակողմանիորեն) փոփոխություններ և լրացումներ, որոնք ուժի մեջ մտնելուց 7 (յոթ) օր առաջ հրապարակվում են Յուքոմի Վեբ-կայքում (որոնց կարելի է ծանոթանալ նաև զանգահարելով Զանգերի սպասարկման կենտրոն կամ այցելելով Վաճառքի և սպասարկման կենտրոններ), բացառությամբ Ծառայություն(-ներ)ում ներառված հեռուստաալիքների կազմի փոփոխության և/կամ Յուքոմի կողմից հեռարձակվող (վերահեռարձակվող) հեռուստաալիքների հեռուստահաղորդումների բովանդակության փոփոխության կամ դադարեցման դեպքերի, որոնք ուժի մեջ են մտնում Վեբ-կայքում հրապարակելուց 3 (երեք) օր հետո:

17.8. Պայմանների 17.7. կետի համաձայն կատարվող փոփոխություններին (լրացումներին) համաձայն չլինելու դեպքում, Բաժանորդն իրավունք ունի միակողմանի կարգով լուծելու Բաժանորդային Պայմանագիրը՝ մինչև փոփոխությունները (լրացումները) ուժի մեջ մտնելու (Յուքոմի կողմից սահմանված) օրը, այդ մասին ծանուցելով Յուքոմին, եթե Բաժանորդը չունի Բաժանորդային Պայմանագրով (Համաձայնագրով) սահմանված ժամկետով Բաժանորդ մնալու չկատարված պարտավորություն: Եթե Բաժանորդը չի դիմում Յուքոմին և շարունակում է օգտվել Ծառայություններից, ապա փոփոխություններ (լրացումներ) կատարելու մասին Յուքոմի առաջարկը համարվում է համաձայնեցված Բաժանորդի հետ և վերջինիս կողմից գործողությամբ ընդունված (ակցեպտավորված):

17.9. Բաժանորդների համար բարենպաստ փոփոխությունների (լրացումների) մասին տեղեկությունը Յուքոմի կողմից Վեբ-կայքում կարող է հրապարակվել այդ փոփոխություններն ուժի մեջ մտնելու օրը կամ դրանից հետո:

17.10. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համաձայն սույն Պայմանների 17.7. կետի Յուքոմը պարբերաբար Բաժանորդային Պայմանագրում, այդ թվում՝ սույն Պայմաններում կատարում է փոփոխություններ (լրացումներ), ուստի Դուք սույնով անվերապահորեն ընդունում եք, որ Վեբ-կայքում հրապարակված Պայմանների, Ծառայությունների Արժեքների, Առաջարկի Նկարագրերի, ինչպես նաև Կարգերի/Կանոնների

և այլ տարբերակների միջև հակասության դեպքում գործում են Վեբ-կայքում վերջին ամսաթվով հրապարակված Պայմանները, Ծառայությունների Արժեքները, Առաջարկի Նկարագրերը և Կարգերն/Կանոնները:

17.11. Դուք եք պարտավոր հետևել (ստուգել) Բաժանորդային Պայմանագրի Յուքոմի կողմից կատարվող փոփոխություններին, որոնք հրապարակվում են Յուքոմի Վեբ-կայքում և/կամ ներկայացվում Վաճառքի և սպասարկման կենտրոններում:

17.12. Յուքոմն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասամբ փոխանցելու Բաժանորդային Պայմանագրով ամրագրված իր իրավունքները կամ զիջելու իր պարտավորություններն այլ անձի՝ առանց Ձեր համաձայնության:

17.13. Դուք իրավունք չունեք Բաժանորդային Պայմանագրով ստանձնած Ձեր իրավունքները և պարտավորությունները փոխանցել երրորդ անձի՝ առանց Յուքոմի համաձայնության:

17.14. Բաժանորդային Պայմանագիրը մեկնաբանվում է ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

17.15. Բաժանորդային Պայմանագրով չկարգավորված Յուքոմի և Ձեր փոխհարաբերությունները կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրության համաձայն:

17.16. Բաժանորդային Պայմանագրի որևէ դրույթի անվավեր կամ առոչինչ ճանաչվելու դեպքում մնացած դրույթները չեն փոփոխվում և մնում են ուժի մեջ:

17.17. Բաժանորդային Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով, սակայն կարող է թարգմանվել և հրապարակվել նաև այլ լեզուներով: Հայերենի և այլ լեզվով տարբերակների միջև հակասության դեպքում գերակա է հայերեն տարբերակը:

18. Անցումային դրույթներ

18.1. Հաշվի առնելով, որ Օրանժի և Յուքոմի վերակազմակերպման արդյունքում Օրանժը միացել է Յուքոմին, և 31.03.2016թ.-ին դադարեցվել է վերջինիս գործունեությունը՝ համաձայն 31.03.2016թ-ին ՀՀ պետական ռեգիստրի կողմից տրված տեղեկանքի, և Օրանժի իրավահաջորդն է հանդիսանում Յուքոմը, ուստի սույն Պայմանների՝ ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած են ճանաչվում Յուքոմի կողմից նախկինում հրապարակված «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՊԱՅՄԱՆՆԵՐ»-ը և Օրանժի՝ հանրային շարժական կապի ծառայությունների մատուցման ընդհանուր դրույթներն ու պայմանները:

18.2. Մինչ սույն Պայմանների ուժի մեջ մտնելը Յուքոմի և Օրանժի կողմից նախկին բոլոր Բաժանորդային Պայմանագրերի (բաժանորդագրությունների) և դրանց հիման վրա մատուցվող Ծառայությունների վրա տարածվում են սույն Պայմանները, բացառությամբ Պայմանների 18.3. կետում սահմանված դեպքերի:

18.3. Սույն Պայմանները չեն տարածվում այն Բաժանորդների վրա, ովքեր սույն Պայմաններն ուժի մեջ մտնելու պահին Յուքոմի և/կամ Օրանժի նկատմամբ ունեն որոշակի ժամկետում Յուքոմի և/կամ Օրանժի Բաժանորդ մնալու չկատարված պարտավորություն: Այդ Բաժանորդների նկատմամբ կիրառվում են նախկինում Օրանժի կամ Յուքոմի կողմից հրապարակված ծառայությունների մատուցման ընդհանուր դրույթներն ու պայմանները և դրանց հիման վրա կնքված Բաժանորդային Պայմանագրերը: Որոշակի ժամկետում Բաժանորդ մնալու պարտավորության դադարման պահից նշված Բաժանորդների նկատմամբ կիրառվում են սույն Պայմանները, և նրանց հետ կնքված Բաժանորդային Պայմանագրերի պայմանները համարվում են փոփոխված՝ սույն Պայմաններին համապատասխան:

19. Յուքոմի վավերապայմանները

«ՅՈՒՔՈՄ» փակ բաժնետիրական ընկերություն

Իրավաբանական հասցե՝ՀՀ, ք. Երևան 0069, Դավիթ Անհաղթի 8/4
Գործունեության հասցե՝ ՀՀ, ք. Երևան 0069, Դավիթ Անհաղթի 8/4
ՀՎՀՀ՝ 00024873

Գլխավոր տնօրեն՝ Ռալֆ Յիրիկյան